Azg
armenian daily
6 ՆՈՅԵՄԲԵՐ 1997. ՀԻՆԳՇԱԲԹԻ # 213 (1466)

Լեւոն Տեր-Պետրոսյանի հոդվածը «Նեզավիսիմայա գազետայում»

Ռուսաստանի ներկայումս ամենաբազմաստիճանակ թերթը «Նեզավիսիմայա գազետան», իր երեկվա համարում ամբողջությամբ տպագրել է Հայաստանի Հանրապետության նախագահի «Պատերազմ, թե՞ խաղաղություն. Լրջանալու պահը» վերնագրով հոդվածը, որն անցյալ շաբաթ օրը լույս էր տեսել մեր եւ Հայաստանում հրատարակվող մի քանի այլ թերթերում, ընթերցվել ռադիոյով եւ հեռուստատեսությամբ, եւ այս օրերին քաղաքական թե ոչ քաղաքական շրջանակներում քննարկվում է մեծ ուշադրությամբ, հաճախ զգացմունքայնությամբ, անգամ կրքով, ավելի հաճախ բացասական ընկալումներով:

Անշուշտ, դեռեւս վաղ է խոսել ռուս ընթերցողի վրա Լեւոն Տեր-Պետրոսյանի հոդվածի թողած տպավորության մասին: Սակայն հեռախոսով հաղորդակցվելով դարաբաղյան հարցով զբաղվող կամ հետաքրքրվող մոսկվայաբնակ հայկական որոշ շրջանակների մի քանի ներկայացուցիչների հետ, իրազեկվեցինք, որ հոդվածն ընդհանուր առմամբ դժգոհության ալիք է առաջացրել եւ այդ շրջանակները մտադիր են ինչ-որ ձեւով արտահայտել իրենց դժգոհությունը:

ԵՐԵՎԱՆ

Սեփականաշնորհման աղեբախումները Ազգային ժողովում

Ուր պատմում են անտառապահի եւ «դեմոկրատական ընդդիմության» մասին

ՆԱՐԻՆԵ ՄԿՐՏՉՅԱՆ

Ազգային ժողովի նոյեմբերի 5-ի նիստում շարունակվեց քննարկվել Պետական գույքի սեփականաշնորհման մասին ՀՀ օրենքի նախագիծը: Այն կարգավորում է պետական գույքի, այդ թվում՝ անավարտ շինարարության օբյեկտների սեփականաշնորհման իրավահարաբերությունները: Ընդգծվում է, որ պետական գույքը սեփականության իրավունքով պետությանը պատկանող գույքն է, այդ թվում՝ պետական ընկերությունների բաժնետոմսերը, պետական մասնակցությամբ ընկերությունների եւ ոչ պետական ընկերությունների պետական բաժնետոմսերը, գույքի առանձին տարրերը:

Ոչ պետական են համարվում այն ընկերությունները, որոնց բաժնետոմսերի 50 տոկոսից ավելին քաղաքացիների կամ իրավաբանական անձանց սեփականությունն է: Իսկ պետական մասնակցությամբ ընկերություններ են համարվում այն ընկերությունները, որոնց բաժնետոմսերի 50 կամ ավելի տոկոսը պետական կամ համայնքային սեփականություն է: Փոքր են համարվում հասարակական սննդի, բնակչության կենցաղային սպասարկման եւ առեւտրի այն օբյեկտները, որոնց զբաղեցրած ընդհանուր տարածքը չի գերազանցում 200 մ²: Սեփականաշնորհման սուբյեկտներ են իրավաբանական եւ ֆիզիկական անձինք: Օրինագծում սահմանվում են այնպիսի հասկացություններ, ինչպիսիք են սեփականաշնորհման սերտիֆիկատները, անհատույց սեփականաշնորհումը, պետական մարմինների իրավասությունները սեփականաշնորհման գործում, պետական գույքի սեփականաշնորհման կարգը, գույքի գինը եւ վճարման ձեւերը, պետական գույքի օգտագործման իրավունքի փոխանցման կարգը եւ այլն:

«Բարեփոխումներ» խմբի անունից Արմեն Մարտիրոսյանը նկատեց, որ հետագա սեփականաշնորհման ժամանակ պետք է հաշվի առնել Հայաստանի աշխարհաքաղաքական առանձնահատկությունները: «Բոլոր պայմանները պետք է ստեղծել սրատեգիկ ինվեստորի համար», «ձեռնարկությունները պետք է հրապուրիչ դարձնել ինվեստորի համար», ընդգծեց Մարտիրոսյանը՝ ավելացնելով, որ «ցանկացած միջազգային մրցույթի պրովալն ապտակ է երկրին»:

Տես # էջ 2

ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎ. ՀԱՐՑՈՒՊԱՏԱՍԽԱՆ

Ղարաբաղի «ատատուսը» որպես «քանակցությունների տեխնիկայի» մաս

Նոյեմբերի 5-ին ԱԺ-ի եւ կառավարության հարցուպատասխանի ժամանակ Լեոնիդ Հակոբյանը վարչապետին հարցրեց, թե չի՞ պատրաստվում կառավարությունը հրաժարական տալ, քանի որ այս կառավարությանը տրված «վստահության լիմիտը» սպառվել է, եթե նկատի ունենանք, որ կառավարության գործունեության հիմնական գնահատականը ժողովրդի կենսամակարդակն է, որը շարունակ ընկնում է:

Նիստը նախագահող Արա Սահակյանը նշեց, թե «ես էլ կարող եմ պատասխանել այդ հարցին»: Ի զարմանս ներկաների՝ վարչապետը ոչ ինքը բարձրացավ տեղից՝ պատասխանելու հարցին, ոչ էլ հանձնարարեց նախարարներից որեւէ մեկին:

Ոչ պակաս տարակուսելի էր ոչ միայն պատգամավորի հարցն անպատասխան թողնելը, այլեւ այն, որ Ա. Սահակյանը չմտահոգվեց այդ փաստից եւ նպատակահարմար գտավ Հակոբյանին նախագահությունը, որ տա կոնկրետ, այլ ոչ թե հռետորական հարցեր:

Կառավարության այսօրինակ դիրքորոշումը խորհրդարանի հանդեպ չմտահոգեց եւ ոչ մի պատգամավորի: Լ. Հակոբյանին մնում էր զգուշացնել ԱԺ փոխնախագահին, որ նա նիստը վարի կանոնակարգի սահմաններում, այլ ոչ թե կառավարության փոխարեն պատասխանի հարցերին:

Վիկտոր Դալլաքյանը հարցրեց ԼՂՀ-ի հիմնախնդրի կարգավորման ուղղությամբ կառավարության դիրքորոշման մասին: Ի պատասխան վարչապետը նշեց, որ կառավարությունում «հատուկ քննարկումներ չենք կազմակերպել: Իսկ մոտեցումը նույնն է՝ կա Մինսկի խումբ, ընթանում են բանակցություններ: Ինչ վերաբերում է «անձնական մոտեցմանը», Քոչարյանը նշեց, որ այն երբեք չի թաքցրել, իսկ Հայաստանի արտաքին քաղաքականության պատասխանատու նախագահն է:

(Այնուամենայնիվ, դժվարացա հիշել, թե ո՞րն է Քոչարյանի «անձնական մոտեցումը» խնդրո առարկայի վերաբերյալ):

Հարց տվող Դալլաքյանն ի լրացում հիշեցրեց Հայաստանի կառավարության ճակատագրական պասիվ դիրքորոշումը 1918–20 թթ. եւ ավելացրեց. «Ուժն է ծնում իրավունք»:

Ֆիդուսի Ղազարյանը լրացրեց գործընկերոջ հարցը՝ ասելով, թե ճանաչո՞ւմ է արդյոք Հայաստանը Լեռնային Ղարաբաղը որպես Ադրբեջանի մաս: Ի պատասխան արտգործնախարարը նկատեց, թե «դա արդեն սատատուսի հետ կապված» հարց է, իսկ «դուք արդեն մտնում եք բանակցությունների տեխնիկայի մեջ»:

Ն. Մ.

Ամերիկյան 12,5 մլն-ը կտրվի բոլոր տուժածներին

Լեռնային Ղարաբաղին տրվելիք ամերիկյան օգնության շուրջ տեղական, ադրբեջանական եւ նաեւ միջազգային լրատվական ծառայությունների մեկնաբանությունները կրում են ժամանակավրեպ բնույթ:

Հայկական կազմակերպությունները ու մամուլը գտնում են, թե 12,5 մլն դոլարը ուղղակի օգնություն է ԼՂՀ-ին, Ադրբեջանը հայտարարում է, որ եթե նման որոշում ընդունվի, կվատթարանան ադրբեջան-ամերիկյան հարաբերությունները: Իրականում, այդ օգնության հարցով դեռեւս վերջնական որոշում չի կայացվել: Ինչպես պատասխանեցին Հայաստանում ԱՄՆ դեսպանության մամուլի եւ հասարակայնության հետ կապերի բաժնում, առայժմ ընդամենը Ներկայացուցիչների պալատի եւ Սենատի համատեղ հանձնաժողովն է որոշում կայացրել եւ այն էլ այն մասին, որ օգնությունը տրվելու է ոչ թե ԼՂՀ-ին, այլ Ղարաբաղի հակամարտությունից բոլոր տուժածներին: Այսինքն, դրանք կարող են լինել եւ Հայաստանում ու ԼՂՀ-ում, եւ Ադրբեջանում: Այնուհետեւ Ներկայացուցիչների պալատն ու Սենատը դեռեւս առանձին-առանձին պետք է հաստատեն այդ որոշումը, որից հետո պետք է վավերացնի ԱՄՆ նախագահ Բիլ Քլինթոնը:

Դեսպանատան պատասխանը նշեց, թե առայժմ 12,5 մլն-ի բաժանման մեխանիզմները հայտնի չեն: Հիշեցնենք միայն, որ «Ազգ»-ում արդեն տպագրվել է նորանկախ պետությունների գծով ԱՄՆ պետքարտուղարի հատուկ խորհրդական, դեսպան Սթիվեն Սեսանովիչի կարծիքը, թե հույս ունի, որ մինչեւ այս ամսվա վերջ, կընդունվի վերոհիշյալ որոշումը:

Ա. Հ.

Կիպրոսի հիմնախնդիրը «Թուրքիայի ազգային գործն է»

ԱՆԿԱՐԱ, 5 ՆՈՅԵՄԲԵՐ, ԱՐՄԵՆՊՐԵՍ: Թուրքիայի փոխվարչապետ եւ ազգային պաշտպանության նախարար Իսմեթ Սեզգինը հայտարարել է, թե «ամբողջ աշխարհը պետք է իմանա, որ Հյուսիսային Կիպրոսի ժողովուրդը միշտ էլ գտնվելու է Անկարայի պաշտպանության ներքո»: Նա Կիպրոսի հիմնախնդիրը համարել է «Թուրքիայի ազգային գործը»:

Ըստ ԻՏԱՌ-ՏԱՍՍ-ի հաղորդման, Սեզգինը նման հայտարարությամբ հանդես է եկել այսպես կոչված «Հյուսիսային Կիպրոսի թուրքական հանրապետությունում», որտեղ նա դիտարկում է թուրքական բանակի «Թորոս-97» զորավարժությունները:

Թուրքիայի ռազմական գերատեսչության ղեկավարը Նիկոսիային եւ Աթենքին մեղադրել է վիճելի հիմնախնդիրները երկխոսության միջոցով կարգավորելուց հրաժարվելու, համատեղ պաշտպանական դոկտրինա իրականացնելու, այնպիսի քայլեր ձեռնարկելու համար, որոնք սպառնում են Թուրքիայի ազգային անվտանգության շահերին, իսկ եվրամիությանը՝ նրանում, որ նա «գործիք է դարձել նրանց խաղի մեջ»: Նա նաեւ մատնանշել է, որ եթե եվրամիությունը որոշում ընդունի բանակցություններ սկսել այդ կազմակերպության մեջ Կիպրոսի Հանրապետության ընդունման հարցի շուրջ, ապա դա սոսկ կհանգեցնի իրավիճակի հետագա ապակայունացմանն այդ տարածաշրջանում:

ՌՈՅՏԵՐ-ԱՐՄԵՆՊՐԵՍ

Չեչնիան՝ իսլամական հանրապետություն

ԱՆԿԱՐԱ, 5 ՆՈՅԵՄԲԵՐ, ԱՐՄԵՆՊՐԵՍ: Չեչնիայի նախագահ Ասլան Մասխադովը հայտարարել է, որ այսուհետեւ իր հանրապետությունը կկոչվի «Չեչնիայի Իսլամական Հանրապետություն»: «Մենք անկախության հասանք եւ այժմ հռչակում ենք նրա կառավարման նոր ձեւը», ասել է նա Անթալիայում մամլո ասուլիսի ժամանակ: Մասխադովի պնդմամբ, «Չեչնիայի անկախությունը շահավետ կլինի Ռուսաստանի համար: Եթե Ռուսաստանը բանակցությունների միջոցով փորձի խոչընդոտել, մենք պատրաստ ենք վերսին մարտնչելու», հայտարարել է նա: Չեչնիայի նախագահը նշել է, որ իր հանրապետությունը կգարգանա շուկայի օրենքներով եւ Թուրքիայի ֆիրմաներին հրավիրել է ներդրումներ անել նրա էկոնոմիկայում: Մասխադովը նաեւ շնորհակալություն է հայտնել թուրք ժողովրդին այն օգնության համար, որ նա Չեչնիային ցույց է տվել պատերազմի ժամանակ: Անթալիայում հանգիստն ավարտելուց հետո Չեչնիայի նախագահը կուղեւորվի Ստամբուլ, այնտեղից՝ ԱՄՆ:

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ ԲԱՆՏԻՑ

Վարուժան Կարապետյանն արգելում է ՀՇԿ-ին իր անունից հանդես գալ

Ֆրանսիական Սեն Մորի բանտում ցմահ բանտարկության դատավճիռ կրող հայ ազատամարտիկ Վարուժան Կարապետյանի ստորագրությամբ ստացել ենք 2 գրություն, որոնցից առաջինը հաղորդագրություն է այն մասին, որ հայ քաղբանտարկյալն իր ազատ արձակման հարցով հանդես գալու եւ իր իրավունքները պաշտպանելու գործը լիազորել է «Մեծն Մուրադ» հասարակական կազմակերպությանը, մինչդեռ երկրորդը հայտարարություն է, որտեղ «Հայկական ժողովրդական շարժմանը» եւ վերջինիս հովանու ներքո գործող «Հայ քաղբանտարկյալների պաշտպանություն» հանձնախմբերին արգելում է այսուհետ երեւանում, Աթենքում, Բեյրութում թե այլուր իր անունից հանդես գալ եւ իր անունից «պաշտոնական կամ անպաշտոն որեւէ գործ կատարել»:

Փարիզի Օրլի օդանավակայանում 1981 թ. «Թըրքիշ էրլայնզի» հատվածում ռումբ պայթեցնելու մեղադրանքով ցմահ բանտարկության դատապարտված ազատամարտիկն իր հայտարարության մեջ բացատրում է իր այդ որոշման դրդապատճառը. «Ցավով հայտնում եմ, գրում է նա, որ գտնվեցին ու գտնվում են այսօր նաեւ անհատներ, որոնք չարաշահելով իմ իրավիճակը, զայն վերածել են բարոյական վարկ ու նյութական եկամուտներ ապահովող մշտահոս աղբյուրի, հաճախ վարկաբեկելով ու երբեմն էլ հալածելով իմ ազատ արձակման համար անկեղծորեն իրենց նպատակը բերող մարդկանց եւ հարազատներիս»:

Նույն հայտարարության մեջ Վ. Կարապետյանը տեղեկացնում է, որ շուտով մեկ այլ հայտարարությամբ հայտնելու է անուններն այն մարդկանց, որոնց ինքը լիազորելու է Երեւանում զբաղվել իր ազատ արձակման «պաշտոնական» աշխատանքներով, առանց հստակեցնելու, թե «Մեծն Մուրադ» մեզ անծանոթ կազմակերպությունն արդյո՞ք միայն Սփյուռքում է լիազորված զբաղվելու նույն գործով: Հիշեցնենք, որ Հայաստանում, թե Սփյուռքում մի քանի տարի է արդեն, որ աշխատանքներ են կատարվում Վարուժան Կարապետյանի ցմահ բանտարկության պատիժը կրճատելու ուղղությամբ:

Տակավին վերջերս, Փարիզում պաշտոնական այցի ժամանակ, ՀՀ նախագահ Լեւոն Տեր-Պետրոսյանը նույնն հարցով անձամբ դիմել էր Ֆրանսիայի նախագահ ժակ Շիրակին:

ԱԶԳ

տեղական

ԵՐԵՎԱՆ

...Ալեքսիումները Ազգային ժողովում

Սկիզբը էջ 1

Կոմկուսի խմբակցության անունից Լեոնիդ Հակոբյանը սեփականաշնորհման նկատմամբ կառավարության որդեգրած մոտեցումները վտանգավոր համարեց: «Սեփականաշնորհումն անցկացնողները դեռ չեն հասկացել, թե ի՞նչ է սեփականաշնորհումը», նկատեց Հակոբյանը՝ ընդդիմանալով այն տեսակետին, ըստ որի պետք է սեփականաշնորհման փորձը ամփոփել. «Ի՞նչ փորձ պետք է ամփոփեք՝ երկիրը քանդելո՞ւ»: Ըստ կոմկուսի ներկայացուցչի, սեփականաշնորհումը դանդաղեցվում է ոչ թե ժողովրդի համար, այլ որ «մաֆիոզ խմբերն ու կլանները կարողանան կատիպալ կուտակել եւ մեծ ձեռնարկությունները գնել»: «Օրենքի նախագիծը հաջողված չէ», նշեց Հակոբյանը, չնայած, ըստ նրա, «նախարարը (Պավել Ղալթախչյանը-Ն. Մ.) հաջողված է»: Ըստ կոմկուսի ներկայացուցչի, իրենց կուսակցությունը կողմնակից է «բազմակացութածեւ տնտեսության, բայց դեմ է ծանր արդյունաբերության բազիսային ճյուղերի սեփականաշնորհմանը»:

«Հանրապետություն» խմբակցության անունից Արա Սահակյանը հայտնեց, որ իրենք «կողմ» կքվեարկեն նախագիծն առաջին ընթերցմամբ ընդունելուն: Նշվեց, որ թերեւս անհրաժեշտ է որդեգրել սեփականաշնորհման «գերմանական ձեւը», որը հնարավորություն է տալիս լուծել սոցիալական խնդիրներ: Ըստ Սահակյանի, մեր տարածաշրջանում Հայաստանը կորցրել է տեմպը, նախաձեռնությունը տնտեսական ոլորտում, եւ սա դառնում է լուրջ քաղաքական խնդիր:

Այնուհետեւ ԱԺ փոխնախագահը մի քարտ ուղարկավ եւ ինքնաթիռ մտքեր հայտնեց, մասնավորապես նշելով, որ հասարակությունը չտեսք է հիմնվի «պետության դայակության վրա», եւ «դեմոկրատական հասարակություն» կառուցվում է միայն սեփականատերերի, ընդհանրապես ունեւոր խավի հիմքի վրա: (Տվյալ տրամաբանությամբ առաջնորդվելով պետք է հանգել այն եզրակացության, որ Հայաստանում ամենալուրջ ժողովրդավարները մաֆիոզներն են, կոռումպացվածները եւ կլանների տերերը): Սահակյանի հաջորդ ուղղակի միտքն այն էր, որ «խորհրդարանը ներկայացնում է հասարակության բոլոր շերտերը»՝ մարզպետներ, գիտության, մշակույթի գործիչներ եւ այլն: (Ստացվում է այնպես, որ Հայաստանի 11 մարզպետներն առանձին հասարակական շերտ են կազմում: Կամ գուցե Սահակյանը ճի՞շտ է):

Անդրադառնալով Լեոնիդ Հակոբյանի ելույթին, Սահակյանը խորհուրդ տվեց բարեհոգի չժպտալ ելույթի ժամանակ, քանի որ «կոմունիստների վերադարձի վտանգը չի բացառվում», մանավանդ որ խորհրդարան չի վերադառնում «դեմոկրատական ընդդիմությունը» (հետաքրքիր է, որ մի ժամանակ նույն խորհրդարանական ընդդիմությանը Սահակյանն այլ որակումներ էր տալիս, որոնք «դեմոկրատական» հասկացությանը տրամագծորեն հակառակ իմաստն ունեին):

Իսկ եթե ընդդիմությունը շարունակի չվերադառնալ խորհրդարան, ապա «մի օր կգա անտառապահը եւ դուրս կհի ե՛ւ աջերին, ե՛ւ ձախերին. ինչպես եղել է 70 տարի առաջ», իր ելույթն այսպես եզրափակեց Սահակյանը: Կոմկուսի խմբակցությունից Նորիկ Պետրոսյանը տեղից ռեպլիկ նետեց, ասելով՝ «է՞հ, անտառին տեր կանգնեք»:

Սեփականաշնորհման նախարար Պավել Ղալթախչյանը գոհունակություն հայտնեց օրինագծի «շահագրգիռ քննարկումից» եւ 15 օր ժամանակ խնդրեց օրինագիծը լրամշակելու համար:

Կառավարությանը տրվեց 15-օրյա ժամկետը:

Նոյեմբերի 5-ին Ազգային ժողովում պատգամավոր Վազգեն Սաֆարյանի աշխատասենյակում, որը երեկվա նիստում հայտարարեց ՀԿԿ խմբակցությունից իր դուրս գալու մասին, կայացավ նրա ճեղագրույցը, որին մասնակցում էին նաեւ կուսակցություն: Սաֆարյանը նշեց, որ կոմկուսի վերնախավում ճգնաժամ է առկա, քանի որ «մի քանի ընկերներ ուզում են կուսակցությունը ծառայեցնել իրենց անձնական նպատակներին»: Կուսակցությունից հեռացված 5 անդամներ ստեղծել են սոցիալիստական ուժերի միություն, ինչն ընկալվում էր որպես քաղաքական կազմակերպություն: Սաֆարյանն ավելացրեց, որ հոկտեմբերի 16-ին կենտկոմի բյուրոն որոշում էր կայացրել, որով անվստահություն էր հայտնվում հաջորդ օրը կայանալիք Մյասնիկյանի շրջանի կոնֆերանսին: Սաֆարյանին հանձնարարվել էր կոնֆերանսի պատվիրակներին տեղեկացնել, որ կոնֆերանսը լեգիտիմ չէ: Կոնֆերանսի ավարտից հետո Սաֆարյանին մեղադրել են, որ չի կարողացել կանխել դրա անցկացումը: Ապա հեռացրել են կուսակցության շարքերից, թեպետ Սաֆարյանը վերընտրվել էր Երեւանի քաղկոմի քարտուղարի պաշտոնում: Նա նշեց, որ կոմկուսի վերնախավում սեփական կարծիքի առկայությունը դիտվում էր որպես այլախոհություն: «Մարդն իր հոգեբանությամբ, իր աշխարհայացքով է համարվում կոմունիստ, այլ ոչ թե բյուրոյի որոշմամբ», ընդգծեց Սաֆարյանը:

Տեր-Վարդանովը նշեց, որ իրականությանը չեն համապատասխանում Ս. Բաղալյանի հնչեցրած թվերը Հայաստանում կոմունիստների թվաքանակի մասին. այսօր կոմունիստների թիվը 4 հազար է, որից 605-ը՝ Մյասնիկյանի շրջանում: Այդ շրջանը համարվեց «ինտելեկտուալ շրջան»: Իսկ ՀԿԿ բյուրոյի նմանօրինակ կեցվածքը որակվեց որպես «մշակված, ծրագրված հաշվեհարդար»:

Ըստ Տեր-Վարդանովի, Բաղալյանը կանգնած է «ռեւոլյուցիայի ոչ կոնստիտուցիոն ուղու վրա»: «Հայաստանի կոմունիստը» ժամանակակից կոմունիստների թերթը չէ», ընդգծեց Տեր-Վարդանովը: Նա նշեց, որ եթե Ս. Բաղալյանն իր կողմնակիցներով գա իշխանություն, ապա ռեպրեսիաներ կիրառվեն: Նա ավելացրեց, որ այսօր կոմունիստների մեծ մասն ունի «ստալինի հոգեբանություն»: Տեր-Վարդանովը դեմ է գենսեկներին, նա կոլեգիալ ղեկավարման կողմնակից է: Ներկա կոմկուսը նա անվանեց «աղարաշի կուսակցություն», իսկ կենտկոմի 108 հոգանոց կազմը՝ «բուտաֆորիա»:

ՊԱՌԱԿՏՈՒՄ

Կոմունիստական հերթական հաշվեհարդարը կուսակիցների նկատմամբ

թյունից վտարված եւս 3 անդամներ՝ Բ. Վարդանյանը, Տեր-Վարդանովը եւ Էդ. Թումանյանը:

Սաֆարյանը նշեց, որ կոմկուսի վերնախավում ճգնաժամ է առկա, քանի որ «մի քանի ընկերներ ուզում են կուսակցությունը ծառայեցնել իրենց անձնական նպատակներին»: Կուսակցությունից հեռացված 5 անդամներ ստեղծել են սոցիալիստական ուժերի միություն, ինչն ընկալվում էր որպես քաղաքական կազմակերպություն: Սաֆարյանն ավելացրեց, որ հոկտեմբերի 16-ին կենտկոմի բյուրոն որոշում էր կայացրել, որով անվստահություն էր հայտնվում հաջորդ օրը կայանալիք Մյասնիկյանի շրջանի կոնֆերանսին: Սաֆարյանին հանձնարարվել էր կոնֆերանսի պատվիրակներին տեղեկացնել, որ կոնֆերանսը լեգիտիմ չէ: Կոնֆերանսի ավարտից հետո Սաֆարյանին մեղադրել են, որ չի կարողացել կանխել դրա անցկացումը: Ապա հեռացրել են կուսակցության շարքերից, թեպետ Սաֆարյանը վերընտրվել էր Երեւանի քաղկոմի քարտուղարի պաշտոնում: Նա նշեց, որ կոմկուսի վերնախավում սեփական կարծիքի առկայությունը դիտվում էր որպես այլախոհություն: «Մարդն իր հոգեբանությամբ, իր աշխարհայացքով է համարվում կոմունիստ, այլ ոչ թե բյուրոյի որոշմամբ», ընդգծեց Սաֆարյանը:

Ի պատասխան մեր այն հարցին, թե ինչպիսի՞ն է եղել իրենց դիրքորոշումը նախագահական ընտրությունների ժամանակ, Տեր-Վարդանովը նշեց, որ իրենք քվեարկել են Բաղալյանի առաջադրման օգտին, բայց եւ ավելացրեց, «Նարդ բիլզա նամի (նկատի ունենալով կոմունիստներին-Ն. Մ), նո մի պրովալիլի վիբորի»: Իսկ ընդդիմությո՞ւն են արդյոք «նորացված կոմկուսի» կողմնակիցները, պատասխանն այս էր. «ոչ թե ռադիկալ, այլ կոնստրուկտիվ»:

ՆԱՐԻՆԵ ՄԿՐՏՉՅԱՆ

Վանաձորում շահագործման հանձնվեց նոր ջրատար

«Տարոն 96» ՍՊԸ շինարարները հանդիսավոր պայմաններում շահագործման հանձնեցին Վանաձորի Ներսիսյան, Չուխաջյան փողոցներն ընդգրկող նոր ջրատարը, որից կօգտվեն նաեւ Մաշտոցի, Զորավար Անդրանիկի փողոցների բնակիչները, որոնք տարիներով զրկված էին կանոնավոր ջրամատակարարումից: Հայաստանի սոցիալական ներդրումների հիմնադրամը եւ տեղի համայնքը համատեղ լուծել են ֆինանսավորման հարցը: Նոր ջրագծի ընդհանուր երկարությունը 1600 գծամետր է, կառույցի ընդհանուր արժեքը 31 մլն դրամ: Ջրագծի շահագործմամբ Վանաձորի 20 հազար բնակիչ նորմալ ջրամատակարարում կունենա: Բացման հանդիսավոր արարողությանը ներկա էին Հայաստանի սոցիալական ներդրումների հիմնադրամի գործադիր տնօրեն Գագիկ Խաչատրյանը եւ ներկայացուցիչները: Վանաձորի քաղաքապետ Անդրանիկ Հարությունյանը շնորհավորանքի խոսք ասաց շինարարներին եւ քաղամասի բնակիչներին: Ջրատարը Վանաձորում սոցիալական ներդրումների հիմնադրամի կողմից ֆինանսավորվող թվով 9-րդ կառույցն է:

ՄԱՆՎԵԼ ՄԻԿՈՅԱՆ

Երեւան. Ջեռուցման գինը 900 դրամից բարձր չի լինի

ԵՐԵՎԱՆ, 5 ՆՈՅԵՄԲԵՐ, ԱՐՄԵՆՊՐԵՍ: Ինչպես արդեն հաղորդվել է, այս տարի ջեռուցում կլինի Երեւանի Մալաթիա-Սեբաստիա, Նոր Նորք, Ավան, Դավիթաշեն եւ, մասնակիորեն, Էրեբունի համայնքներում: Չնայած ջեռուցման ինքնարժեքը անցյալ տարվա համեմատությամբ բարձրացել է շուրջ 85 դրամով (1 քառակուսի մետրի համար մոտ 1485 դրամ), այնուամենայնիվ, ինչպես անցյալ տարի, այս տարի եւս այդ թիվը չի անցնի 900 դրամից: Այսպես, Արմենպրեսի թղթակիցը նշված համայնքների քաղաքապետարաններից տեղեկացել է, որ դրանցից յուրաքանչյուրում որոշումներ են ընդունվել ջեռուցման վարձը 900 դրամ սահմանելու մասին: Քանի որ այս տարի տեղական ինքնակառավարման մարմիններն իրենք են հոգում ջեռուցման հետ կապված հոգսերը, ապա, ենթադրվում է, որ իրենք էլ կորոշեն, թե ինչ աղբյուրների հաշվին ծածկեն քառակուսի մետրի հաշվով մոտ 600 դրամի հասնող դեֆիցիտը: Նշված բոլոր համայնքներում ինտենսիվ աշխատանքներ են տարվում ջեռուցման համակարգերի տեխնիկական սպասարկման, հայտնաբերվող վթարված հաղորդակցությունների արագ վերականգնման ուղղությամբ:

Դպրոցներում գումար հավաքելը՝ հոգաբարձուների խորհրդի որոշմամբ

ԵՐԵՎԱՆ, 5 ՆՈՅԵՄԲԵՐ. ԱՐՄԵՆՊՐԵՍ: Երեւանի քաղաքապետին կից մայրաքաղաքի դպրոցների տնօրենների խորհրդի որոշման համաձայն, մինչեւ ընթացիկ տարվա նոյեմբերի 1-ը ժամանակ էր տրված դպրոցներում հոգաբարձուների խորհուրդներ ստեղծելու համար: Քաղաքապետարանի կրթության վարչությունից հայտնեցին, որ այդ ժամկետը լրանալու կապակցությամբ այսուհետեւ մայրաքաղաքի բոլոր հանրակրթական ուսումնական հաստատություններում արգելվում է առանց դպրոցի հոգաբարձուների խորհրդի գրավոր որոշման ցանկացած նպատակով գումար հավաքելը: Խախտման դեպքում քաղաքացիները կարող են դիմել քաղաքապետարանի կրթության վարչություն կամ զանգահարել 58-07-21 հեռախոսահամարով:

Առողջապահական հարցերը՝ ԱՊՀ երեւանյան նիստում

ԵՐԵՎԱՆ, 5 ՆՈՅԵՄԲԵՐ, ՆՈՅՅԱՆ ՏԱՊԱՆ: Առողջապահության բնագավառի կենսական խնդիրները կքննարկվեն եւ դրանց լուծման ընդհանուր մոտեցումներ կմշակվեն ԱՊՀ երկրների առողջապահության բնագավառում համագործակցության խորհրդի 9-րդ նիստում, որ տեղի կունենա Երեւանում նոյեմբերի 13-14-ը: Քննարկմանը կմասնակցեն ԱՊՀ երկրների առողջապահության նախարարները, ինչպես նաեւ խորհրդի կազմի մեջ մտնող գլխավոր սանիտարական բժիշկները:

ՀԱՍԱՐՈՍ

Հայաստան-կժամանի Բուլղարիայի ԱԳ նախարարը

ԵՐԵՎԱՆ, 5 ՆՈՅԵՄԲԵՐ. ԱՐՄԵՆՊՐԵՍ: Նոյեմբերի 7-ին տարածաշրջան եւ Միջին Ասիայի մի շարք երկրներ այցի շրջանակներում Հայաստան կժամանի Բուլղարիայի արտգործնախարար Նադեժդա Միխայլովայի գլխավորած պատվիրակությունը: Կառավարության անդամներից բացի, ավելի քան 50 մարդուց բաղկացած պատվիրակության կազմում են փորձագետներ, գործարարներ եւ լրագրողներ: Երկօրյա այցի ընթացքում պատվիրակության անդամները կհանդիպեն ՀՀ նախագահ Լեւոն Տեր-Պետրոսյանի, ԱԺ նախագահ Բաբկեն Արարքցյանի եւ վարչապետ Ռոբերտ Քոչարյանի հետ: Ն. Միխայլովան Ա. Արզումանյանի հետ վաղը (այսօր) ասուլիս կտա լրագրողներին:

«Գեղեռն Ռիխտեր» ձեռնարկություն Հայաստանում

ԵՐԵՎԱՆ, 5 ՆՈՅԵՄԲԵՐ. ԱՐՄԵՆՊՐԵՍ: Հայաստանի դեղորայքի շուկայում «Գեղեռն Ռիխտեր» աշխարհահռչակ դեղագործական ֆիրմայի եռամյա գործունեության արդյունքը կդառնա հանրապետությունում ստեղծվող համատեղ ձեռնարկությունը: Հայաստանում «Գեղեռն Ռիխտեր» բաժնետիրական ընկերության ներկայացուցչության տնօրեն Արտաշես Բլուրգյանն ասաց, որ սկզբնական շրջանում դա կլինի համատեղ առեւտրական ձեռնարկություն, իսկ հետագայում այստեղ կսկսվի դեղորայքի արդյունաբերական արտադրություն: Երեւանում համատեղ ձեռնարկության ստեղծումը կնպաստի դեղորայքի գների իջեցմանը: Պարոն Բլուրգյանն ասելով, եկող տարի համատեղ ձեռնարկության ստեղծման գործում հունգարական կողմի ներդրումները կկազմեն մոտավորապես 200 հազար ամերիկյան դոլար:

Վարչական ազդ

Սույնով տեղեկացնում ենք «Ազգի» հաստատուն եվրոպայի ու Ֆրանսիայի ընթերցողներին, որ արդեն շուրջ 2 տարուց ի վեր Ռաֆֆի Հերմոն Արաքս անունով անձը որեւէ առնչություն չունի մեր թերթի հետ եւ բացարձակապես լիազորված չէ մեր անունից կամ այլապես «Ազգի» բաժանորդագրություն անցկացնելու, բաժանորդագին գանձելու եւ կամ այլ գործարքներ կնքելու: Նրա նման գործարքները ենթակա են դատական հետապնդման:

ՏՆՕՐԵՆՈՒԹՅՈՒՆ

«ԱԶԳ» ՕՐԱԹԵՐԹ
Հրատարակվում է տարի
Հիմնադիր եւ հրատարակիչ
«Ազգ» թերթի հիմնադիր խորհուրդ
Երեւան 375010, Հանրապետության 47
Ֆաքս 562941, AT&T (3742) 151065,
e-mail INTERNET: azg2@arminco.com
Գլխավոր խմբագիր
ՅԱԿՈԲ ԱՒԵՏԻՔԵԱՆ / հեռ. 521635
Տնօրենություն / հեռ. 562863
Համակարգչային
ծառայություն / 581841
Apple Macintosh
համակարգչային շարուածքը
«Ազգ» թերթի
Տղումը «Ազգին» պարտադիր է
Նիւթերը չեն գրախօսւում ու չեն
վերադարձւում
«AZG» DAILY NEWSPAPER
Editor
H. AVEDIKIAN / phone: 521635
47 Hanrapetoutian st.,
Yerevan, Armenia, 375010

ԱԶԳ

Խմբագրական

ՀՀ նախագահի՝ վերջին շրջանում երկրորդ ծավալուն հրապարակային ելույթը՝ «Պատերազմ, թե՞ խաղաղություն» երկխոսությունը՝ ակնկալող մենախոսությունը կարդալով, հիշեցի... Երեւանի քաղաքապետ, արդեն՝ նաեւ ԱԺ պատգամավոր Վանո Սիրադեղյանին, որը նախագահական ընտրությունների նախօրեին Հանրապետության հրապարակում հավաքված մարդկանց կոչամբելու պես հորդորում էր. «Չեռքերդ դրեք խղճին եւ ասեք՝ ո՞ր մեկդ էր պատկերացնում, թե Ղարաբաղը 10 տարի հետո, 100 տարի հետո միացած կլինի Հայաստանին: Հիմա միացած է: Գնացեք եւ գոնե մի անգամ շնորհակալություն հայտնեք նախագահին Ղարաբաղի համար»: Տեսնես ի՞նչ է մտածում հիմա Վանո Սիրադեղյանը: Ի՞նչ են մտածում նրանք, որ արցախյան խաղաքաղաքը դարձել էին Լեւոն Տեր-Պետրոսյանի նախընտրական ծրագրի մեխը: Երեւի, անսալով քանականության ձայնին, լրջացել ու ծանրութեթեւ են անում «փոխզիջման» նժարները՝ հիշելով նախընտրական «անմեղ կասկածները»:

Հոդվածում մաքենամիկայի ձեռնարկին վայել, կետերով ու ենթակետերով համակարգված հարցուպատասխանը, «վերագրումները», «թյուրիմացությունները», «առաստելները ու հանելուկները», որ բոլոր ժամանակների ամենաարագամիտ պետական քաղաքական գործչի, երկաթյա անխոցելի տրամաբանությամբ առաջնորդվող սուպեր-քաղաքագետի իմիջ ստեղծելու միտում ունեն, պատասխան բազմաթիվ հարցադրումներ են «առաջում», սակայն բավարարվենք մի քանիսով:

1. Նախագահը միայն հիմա՞ հասկացավ «այն պարզ իրողությունը», որ Արցախի հակառակորդը Ադրբեջանը չէ, այլ միջազգային հանրությունը, որ Արցախի անկախությունը կամ Հայաստանի հետ միավորումը ոչ գիտական ֆանտաստիկայի բնագավառից է: Եթե ոչ, իր հստակատեսության «հյուրալի» պտուղն ինչո՞ւ չբացահայտեց այն ժամանակ, երբ դեռ հնարավոր էր կանխել ղարաբաղա-ադրբեջանական պատերազմը՝ Անկախության հրապարակում ալեկոծվող բազմությանը բացատրելով «մախիմալիզմից» իրաժարվելու հրամայականը: Ինչի՞ համար էին հազարավոր, ինչպես ինքն է ասում, «անմեղ զոհերը»: Մի՞թե բացառապես ՀՀԾ-ն իշխանության բերելու համար: Իսկ եթե այո, ապա նախագահի «պրագմատիզմը» չի՞ հուշում, որ ինքն առնվազն ձախողվել է:

2. Նախագահի հավանությանն արժանացած «փոխզիջումային» ծրագրով, որի համաձայն Արցախը զիջում է թե՛ իր անկախությունը, թե՛ արյունով նվաճած տարածքները, վերջապես ի՞նչ է զիջում Ադրբեջանը. Ղարաբաղը եւ ղարաբաղցիներին արյան մեջ խեղդելու կամ Արցախի հողն իր էթնիկ բնակչությունից «զտելու» մտադրությո՞ւնը: Մինչեւ ե՞րբ: Չէ՞ որ, ինչպես ասվում է հոդվածում, փոխզիջման դիմելիս կողմերը ձգտում են «սառեցնել խնդիրը, հետաձգել՝ ժամանակ շահելու, ուժեր կուտակելու եւ ավելի բարենպաստ հանգամանքներում հոգուս իրենց լուծելու նպատակով, հույս փայփայելով, որ հետագայում ժողովուրդների հարաբերություններում նոր մտածողության արմատավորման (գուցե դայլը գառին ղպահ տալու «նոր ուղղ»ւ»–Լ. Պ.)... հետեւանքով խնդիրը կարող է կորցնել իր սուրությունը եւ, սահմաններն, օրինակ, չունենան այն նշանակությունը, որ ունեն ներկայումս»: Քանի որ, ինչպես հավատացնում է նախագահը, Ադրբեջանն օր օրի հզորանալու է, ապա երաշխիք կա՞, որ ուժեր կուտակելով, խնդիրը չի լուծելու վերը նշված տարբերակներից մեկով՝ Հայաստանին վերադարձնելով արժեքների վերագնահատման «տիրապետող» գործընթացների նկատմամբ «փայփայվող հույսերը»: Հետաքրքիր է, եթե խորհրդային կայսրության 70 տարիները, երբ սահմաններն այնքան ձեւական էին, որքան դա առհասարակ հնարավոր է, չբացրին խնդիրը, ապա որքանո՞վ իրատես է իրատեսության կոչ անող նախագահը, երբ, տուրք տալով իրեն ոչ յուրահատուկ կասկածելի «ռոմանտիզմին», կովկասյան եռացող կաթսան համեմատում է Եվրոպայի հետ:

3. Երբ նախագահն ասում է, որ ադրբեջանական ընդդիմությունը «փոխզիջման» համար Ալիեւին մեղադրելու է դավաճանության եւ չունեցած Ղարաբաղը ծախելու մեջ, լրջորեն հավատո՞ւմ է, որ, ոսկյա սկուտեղով վերսանալով այն, Ադրբեջանն իրեն զրկված է զգալու:

4. Անվերապահորեն պնդելով, որ հայկական կողմը «մեծ հաշվով» պարտության է դատապարտված եւ որպես ախիռմ «անցկացնելով» սույն (ո՞չ պարտվողական) դրույթը, նախագահը մոռացե՞լ է, որ 92–93 թթ. նույնպես ոչ անհայտ «մունեթիկների» միջոցով «պտտվում էր» ահեղ մրցակցի հետ ոտ մեկնելու «անհերթության» վարկածը:

5. Եթե Ղարաբաղը շահել է ոչ թե պատերազմը, այլ միայն ճակատամարտը, ապա մի՞թե, շահելով ճակատամարտը, ինքը կաղիսուլյացիայի պիտի ենթարկվի, մինչ հակառակ կողմը, տանուլ տալով, պայմաններ պարտադրելու՝ նախընտրելով «կարգավիճակ գրված տարածքների դիմաց» հիրավի փոխզիջման տարբերակը:

7. Վստահեցնելով, որ «Հայաստանը երբեւէ չի ստորագրի որեւէ փաստաթուղթ, որի տակ չլինի ԼՂ (նկատենք՝ ոչ ԼՂՀ) ստորագրությունը, նախագահը չի՞ «լվանում ձեռքերը» եւ չի՞ մոռանում ՀՀ ԳԽ 1992 թ. հուլիսի 8-ի որոշումը՝ Արցախն Ադրբեջանի կազմում ճանաչելու անընդունելիության մասին (գուցե, վերջինս «սուտափուս» չեղյա՞լ է հայտարարված):

8. Ադրբեջանին ձեռնտո՞ւ է հարցի չկարգավորված վիճա[illegible] եթե ոչ, ապա ավելի շատ Հայա[illegible] թե՞ Ադրբեջանին է պետք տարածաշրջանային խաղաղությունը: Մի՞թե ոչ Ադրբեջանին, որը նման է ոսկու վրա ձեռնունայն նստած հարուստի, որն առանց այդ խաղաղության Հայաստանից ոչ պակաս «ընչազուրկ է»: Եթե այո, ապա նախագահն ինչո՞վ է բացատրում «փոխզիջումն» անգիջում «գլուխ բերելու» Ադրբեջանի անսանձ ախորժակը:

Վերջապես, հատկապես ե՞րբ նախագահը որոշեց, որ եկել է մեր լրջանալու ժամանակը: Նախագահական ընտրություններից հետո՞:

ԼԻԼԻԹ ՊՈՂՈՍՅԱՆ

ՍՈՒՐ ԱՆԿՅՈՒՆ

Ինչո՞ւ հիմա որոշվեց, որ եկել է լրջանալու պահը

ՀՀ նախագահի՝ վերջին շրջանում երկրորդ ծավալուն հրապարակային ելույթը՝ «Պատերազմ, թե՞ խաղաղություն» երկխոսությունը՝ ակնկալող մենախոսությունը կարդալով, հիշեցի... Երեւանի քաղաքապետ, արդեն՝ նաեւ ԱԺ պատգամավոր Վանո Սիրադեղյանին, որը նախագահական ընտրությունների նախօրեին Հանրապետության հրապարակում հավաքված մարդկանց կոչամբելու պես հորդորում էր. «Չեռքերդ դրեք խղճին եւ ասեք՝ ո՞ր մեկդ էր պատկերացնում, թե Ղարաբաղը 10 տարի հետո, 100 տարի հետո միացած կլինի Հայաստանին: Հիմա միացած է: Գնացեք եւ գոնե մի անգամ շնորհակալություն հայտնեք նախագահին Ղարաբաղի համար»: Տեսնես ի՞նչ է մտածում հիմա Վանո Սիրադեղյանը: Ի՞նչ են մտածում նրանք, որ արցախյան խաղաքարը դարձել էին Լեւոն Տեր-Պետրոսյանի նախընտրական ծրագրի մեխը: Երեւի, անսալով քանականության ձայնին, լրջացել ու ծանրութեթեւ են անում «փոխզիջման» նժարները՝ հիշելով նախընտրական «անմեղ կասկածները»:

Հոդվածում մաքենամիկայի ձեռնարկին վայել, կետերով ու ենթակետերով համակարգված հարցուպատասխանը, «վերագրումները», «թյուրիմացությունները», «առաստելները ու հանելուկները», որ բոլոր ժամանակների ամենաարագամիտ պետական քաղաքական գործչի, երկաթյա անխոցելի տրամաբանությամբ առաջնորդվող սուպեր-քաղաքագետի իմիջ ստեղծելու միտում ունեն, պատասխան բազմաթիվ հարցադրումներ են «առաջում», սակայն բավարարվենք մի քանիսով:

1. Նախագահը միայն հիմա՞ հասկացավ «այն պարզ իրողությունը», որ Արցախի հակառակորդը Ադրբեջանը չէ, այլ միջազգային հանրությունը, որ Արցախի անկախությունը կամ Հայաստանի հետ միավորումը ոչ գիտական ֆանտաստիկայի բնագավառից է: Եթե ոչ, իր հստակատեսության «հյուրալի» պտուղն ինչո՞ւ չբացահայտեց այն ժամանակ, երբ դեռ հնարավոր էր կանխել ղարաբաղա-ադրբեջանական պատերազմը՝ Անկախության հրապարակում ալեկոծվող բազմությանը բացատրելով «մախիմալիզմից» իրաժարվելու հրամայականը: Ինչի՞ համար էին հազարավոր, ինչպես ինքն է ասում, «անմեղ զոհերը»: Մի՞թե բացառապես ՀՀԾ-ն իշխանության բերելու համար: Իսկ եթե այո, ապա նախագահի «պրագմատիզմը» չի՞ հուշում, որ ինքն առնվազն ձախողվել է:

2. Նախագահի հավանությանն արժանացած «փոխզիջումային» ծրագրով, որի համաձայն Արցախը զիջում է թե՛ իր անկախությունը, թե՛ արյունով նվաճած տարածքները, վերջապես ի՞նչ է զիջում Ադրբեջանը. Ղարաբաղը եւ ղարաբաղցիներին արյան մեջ խեղդելու կամ Արցախի հողն իր էթնիկ բնակչությունից «զտելու» մտադրությո՞ւնը: Մինչեւ ե՞րբ: Չէ՞ որ, ինչպես ասվում է հոդվածում, փոխզիջման դիմելիս կողմերը ձգտում են «սառեցնել խնդիրը, հետաձգել՝ ժամանակ շահելու, ուժեր կուտակելու եւ ավելի բարենպաստ հանգամանքներում հոգուս իրենց լուծելու նպատակով, հույս փայփայելով, որ հետագայում ժողովուրդների հարաբերություններում նոր մտածողության արմատավորման (գուցե դայլը գառին ղպահ տալու «նոր ուղղ»ւ»–Լ. Պ.)... հետեւանքով խնդիրը կարող է կորցնել իր սուրությունը եւ, սահմաններն, օրինակ, չունենան այն նշանակությունը, որ ունեն ներկայումս»: Քանի որ, ինչպես հավատացնում է նախագահը, Ադրբեջանն օր օրի հզորանալու է, ապա երաշխիք կա՞, որ ուժեր կուտակելով, խնդիրը չի լուծելու վերը նշված տարբերակներից մեկով՝ Հայաստանին վերադարձնելով արժեքների վերագնահատման «տիրապետող» գործընթացների նկատմամբ «փայփայվող հույսերը»: Հետաքրքիր է, եթե խորհրդային կայսրության 70 տարիները, երբ սահմաններն այնքան ձեւական էին, որքան դա առհասարակ հնարավոր է, չբացրին խնդիրը, ապա որքանո՞վ իրատես է իրատեսության կոչ անող նախագահը, երբ, տուրք տալով իրեն ոչ յուրահատուկ կասկածելի «ռոմանտիզմին», կովկասյան եռացող կաթսան համեմատում է Եվրոպայի հետ:

3. Երբ նախագահն ասում է, որ ադրբեջանական ընդդիմությունը «փոխզիջման» համար Ալիեւին մեղադրելու է դավաճանության եւ չունեցած Ղարաբաղը ծախելու մեջ, լրջորեն հավատո՞ւմ է, որ, ոսկյա սկուտեղով վերսանալով այն, Ադրբեջանն իրեն զրկված է զգալու:

4. Անվերապահորեն պնդելով, որ հայկական կողմը «մեծ հաշվով» պարտության է դատապարտված եւ որպես ախիռմ «անցկացնելով» սույն (ո՞չ պարտվողական) դրույթը, նախագահը մոռացե՞լ է, որ 92–93 թթ. նույնպես ոչ անհայտ «մունեթիկների» միջոցով «պտտվում էր» ահեղ մրցակցի հետ ոտ մեկնելու «անհերթության» վարկածը:

5. Եթե Ղարաբաղը շահել է ոչ թե պատերազմը, այլ միայն ճակատամարտը, ապա մի՞թե, շահելով ճակատամարտը, ինքը կաղիսուլյացիայի պիտի ենթարկվի, մինչ հակառակ կողմը, տանուլ տալով, պայմաններ պարտադրելու՝ նախընտրելով «կարգավիճակ գրված տարածքների դիմաց» հիրավի փոխզիջման տարբերակը:

7. Վստահեցնելով, որ «Հայաստանը երբեւէ չի ստորագրի որեւէ փաստաթուղթ, որի տակ չլինի ԼՂ (նկատենք՝ ոչ ԼՂՀ) ստորագրությունը, նախագահը չի՞ «լվանում ձեռքերը» եւ չի՞ մոռանում ՀՀ ԳԽ 1992 թ. հուլիսի 8-ի որոշումը՝ Արցախն Ադրբեջանի կազմում ճանաչելու անընդունելիության մասին (գուցե, վերջինս «սուտափուս» չեղյա՞լ է հայտարարված):

8. Ադրբեջանին ձեռնտո՞ւ է հարցի չկարգավորված վիճա[illegible] եթե ոչ, ապա ավելի շատ Հայա[illegible] թե՞ Ադրբեջանին է պետք տարածաշրջանային խաղաղությունը: Մի՞թե ոչ Ադրբեջանին, որը նման է ոսկու վրա ձեռնունայն նստած հարուստի, որն առանց այդ խաղաղության Հայաստանից ոչ պակաս «ընչազուրկ է»: Եթե այո, ապա նախագահն ինչո՞վ է բացատրում «փոխզիջումն» անգիջում «գլուխ բերելու» Ադրբեջանի անսանձ ախորժակը:

Վերջապես, հատկապես ե՞րբ նախագահը որոշեց, որ եկել է մեր լրջանալու ժամանակը: Նախագահական ընտրություններից հետո՞:

ԼԻԼԻԹ ՊՈՂՈՍՅԱՆ

ՊԱՐԶԱԲԱՆՈՒՄ

Տեղեկատվության վարչության պետի տեղակալը ճշգրտում է

«Ազգի» նոյեմբերի 1-ի համարում «Նոյյան տապան» լրատվական գործակալության տարածած «Նոյյան տապանին» եւ «Սնարին» ներկայացված վերջնագիրը թյուրիմացություն է, հավատացնում է Սարոյանը» վերնագրով տեղեկատվության կաղակցությամբ ՀՀ կառավարությանն առընթեր տեղեկատվության եւ զրահրատարակչության վարչության պետի տեղակալ Էդուարդ Սարոյանից ստացել ենք հետեւյալ պարզաբանումները.

«Նոյյան տապանը» գրում է. «Ըստ որն Սարոյանի, վարձավճարներից նախատեսվում է գումար հատկացնել նաեւ շենքի կապիտալ վերանորոգման համար, որն ավարտելուց հետո վարձավճարը հնարավոր կլինի էլ ավելի իջեցնել»: Իրականում ասել եմ, որ կապիտալ վերանորոգումից հետո վարձավճարների հավելյալ գումարը կհատկացվի շենքն ասիճանաբար նորացնելու եւ առավել բարեկարգելու համար:

Այնուհետեւ. «Նա խոստացավ, որ Իսահակյան 28-ում գտնվող ՁԼՄ-ների տարածքների վարձավճարները կհամապատասխանեցվեն մամուլի շենքում հատատվելիք սակագներին», գրում է «Նոյյան տապանը»:

Նման բան ես չի հայտարարվել: Մի քանի անգամ, տրված հարցին միեւնույն պատասխանն է տրվել, ըստ որի մոտեցումը կլինի նույն սկզբունքով, սակայն մի շարք պատճառներից ելնելով սակագները չեն կարող համընկնել:

Թյուրըմբռնումն այստեղ ակնհայտ է, ինչպես ակնհայտ է, որ վարձավճարները չեն կարող նույնը լինել միանգամայն տարբեր շենքերի համար:

Ինչ է մեզ պատասում Կոպենհագենում

ՀՀ նախագահից մինչեւ արտգործնախարարության վերջին պաշտոնյան, անհանգստության նշանները չթաքցնելով, խոսում են դեկտեմբերի 15–17-ը Դանիայի մայրաքաղաքում կայանալիք ԵԱՀԿ նախարարների խորհրդի առաջիկա նիստի մասին: Տպավորություն է ստեղծվում, թե արտաքին որոշակի ուժերի կողմից ժամկետ է դրված Հայաստանի ու Ղարաբաղի առաջ, որից հետո զարգացումները կարող են ընթանալ մեզ համար խիստ անբարենպաստ ուղղությամբ:

Նախագահը պնդում է, որ եթե մինչեւ Կոպենհագեն չհաջողվի «հակամարտող կողմերի միջեւ համաձայնեցնել բանակցությունների հիմք հանդիսացող փաստաթղթի նախագիծը», ապա «մեզ լուրջ բարդություններ կարող են սպասել»: Ու թեեւ մեր արտգործնախարարը խոստանում է մեծ հաճույքով օգտագործել վետոյի իր իրավունքը, բայց նրա ավելի փորձված առաջին տեղակալը կոպենհագենյան փորձությունը դիտարկում է որպես լուրջ սահմանագիծ՝ Ադրբեջանի ճնշումը չեզոքացնելու եւ ապա հակահարձակման անցնելով՝ Լիսաբոնի ձախողման արդյունքները վերացնելու առումով:

Այսպիսով, պարզորոշ է դառնում, որ Կոպենհագենը լինելու է այն շրջափուլի ավարտը, որը սկսվեց լիսաբոնյան ձախողումով: ՀՀ նախագահը, զգուշանալով նոր Լիսաբոնից, Ղարաբաղից պահանջում է մինչ այդ դրսեւորել մաքսիմալ ճկունություն՝ Ադրբեջանի խաղաքարտերը խլելու եւ ժամանակ շահելու նպատակով: Իհարկե, դիվանագիտական հարթության վրա կարելի է հասկանալ սույն հորդորները, կարելի է զիջումների գնալ բազմաթիվ հարցերում, բայց կարո՞ղ է ԼՂՀ-ն որպես բանակցություններ հիմք ընդունել մի փաստաթուղթ, ուր ի սկզբանե ամրագրվում է գրավյալ հողերի վերադարձը, այսինքն՝ փաստորեն ուղղահայաց ձեւով Ադրբեջանին ենթարկվելու հեռանկարը: Կորցնելով գրավյալ տարածքների խաղաթուղթը՝ ԼՂՀ-ն այլեւս չի կարող երկար համառել: Այդ դեպքում ո՞վ է սահման դնելու Ադրբեջանի օրեցօր մեծացող ախորժակին եւ նրա թիկունքում կանգնած ուժերի բացահայտ ճնշմանը: Մեկը պե՞տք է իր վրա վերցնի «ո՛չ» ասելու պատասխանատվությունը: Ու եթե ՀՀ նախագահը վախենում է Կոպենհագենից հետո մեզ սպասող բարդություններից, ապա հաշվարկե՞լ է, թե ո՛ր տարբերակում են դրանք ավելի մեծ:

Համաձայնելու եւ արդեն մշակված սցենարի մեջ տեղավորվելու դեպքում ուշացած նահանջը ձախողվելու է՝ առաջ բերելով լուրջ պատժամիջոցներ կամ մեզ կանգնեցնելով կատարված փաստերի առաջ: Ղարաբաղի կողմից համաություն դրսեւորելու դեպքում Հայաստանը կարող է ենթարկվել տնտեսական ճնշումների ու սահմանափակումների: Ադրբեջանում կինչեն պատերազմի կոչեր (դրա համար է, թերեւս, Բաքու հրավիրվել Էլչիբեյը), բայց գործը պատերազմի չի հասնի: Պատերազմական սցենարն առայժմ ձեռնտու չէ Ադրբեջանին, եւ նա աշխատելու է հնարավորին չափ թուլացնել, քամել իր հակառակորդին: Բացի դրանից, պատերազմի դեպքում կարող են ձախողվել նաեւ վերջինիս նավթային խաղագումարները: Բնականաբար, պատերազմը ձեռնտու չէ նաեւ Հայաստանի նախագահին, որն այդ դեպքում ստիպված է լինելու իջնել քաղաքական ասպարեզից, քանի որ աշխատելու է տարածաշրջանը «սանձելու» ռազմական սցենարը (այս առումով կողմերի «շահերը» որոշ չափով համընկնում են):

Ներկայումս ակնհայտ է դառնում, որ ցանկացած տարբերակում դարաբաղյան թնջուկը սոսկ արտաքինից է միայն դարաբաղյան: Ղարաբաղի միջոցով լուծվում է տարածաշրջանի կողմնորոշման հարցը, այստեղ բախվում են հսկայական մեծության ուժեր: Բնականաբար, չի կարելի տրվել նրանցից մեկին կամ մյուսին, եւ հայկական երկու պետություններ պարտավոր են տեղավորվել տարբեր սցենարների մեջ: Յուրաքանչյուր հանգրվանում նրանցից պետք է նվազի ա՛յն ջուրակահարը, որի խմբավարը կբարձրացնի փայտիկը: Հարկ եղած դեպքում կարելի է նաեւ նվազել տարբեր մեղեդիներ: Բնական է, որ այդ պայմաններում հայկական կողմը Կոպենհագենում ասելու է ե՛ւ այո, ե՛ւ ոչ:

«ԵՐԵՎԱՆ»

Վերջին հրաժեշտ Բաբկեն Չուգասզյանին

ԵՐԵՎԱՆ, 5 ՆՈՅԵՄԲԵՐ, ԱՐՄԵՆՊՐԵՍ: Մայրաքաղաքի հասարակայնությունը նոյեմբերին 5-ին Հայաստանի գրողների միության մեծ դահլիճում վերջին հրաժեշտը տվեց նշանավոր հայագետ-արեւելագետ, բանասիրական գիտությունների թեկնածու, Մաշտոցի անվան հին ձեռագրերի ինստիտուտի՝ Մատենադարանի երկարամյա փոխտնօրեն, Հայաստանի մշակույթի վաստակավոր աշխատող Բաբկեն Լեւոնի Չուգասզյանին:



Այստեղ էին գրականության, արվեստի, գիտության գործիչներ, ՀՀ նախարարությունների, Գիտությունների ազգային ակադեմիայի, Մատենադարանի պատասխանատու աշխատողներ, բուհերի դասախոսներ եւ ուսանողներ, հանգուցյալի հարազատները:

Բաբկեն Չուգասզյանի գիտական, մանկավարժական վաստակի, հայրենասիրական գործունեության մասին խոսեցին բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Պարույր Մուրադյանը, Հայաստանի ազգային գրադարանի տնօրեն Գեւորգ Տեր-Վարդանյանը, «Սեբաստիա» հայրենակցական միության նախագահի տեղակալ, արձակագիր Գրիգոր Ջանիկյանը, արվեստաբան Շահեն Խաչատրյանը:

Կատարվեց հոգեհանգստյան պատարագ, ապա հուղարկավորների բազմությունը ուղղություն վերցրեց դեպի Թոխմախի գերեզմանատուն, որտեղ եւ հանգուցյալի աճյունը հանձնվեց հողին:

ԼՂՀ անկախությունը կճանաչվի՞ միջազգայնորեն...

Կարծիք են հայտնում Գերմանիայի գործիչներ

«Ազգի» ընթերցողներին առիթ ենք տվել տեղեկացնել, որ Հայաստանի Հանրապետության անկախության 6-ոդ տարեդարձի առթիվ Բոնն «Լա Ռեդուտ» ճանաչված տահում ՀՀ դեսպանատունը ընդունելություն էր կազմակերպել: Հրավիրյալների բազմամարդ դահլիճը հուզում էր Ղարաբաղի մասին խոսակցություն ծավալել: Թեև Գերմանիայի արտգործնախարարության առաջին խորհրդական, Կովկասյան եւ Կենտրոնական Ասիայի բաժնի ղեկավար դոկտոր Էննո Բարկերը ժամը չթարգնելով «դիտողություն» արեց, թե լրագրողիս դարձյալ նույն խնդիրն է հուզում, այդուհանդերձ ավելորդ չհամարեցի Հայաստանի անկախության տոնի առթիվ հրավիրյալներին Ղարաբաղի անկախության ճանաչման մասին հարցով դիմել: Անտարբերի դարասխան չեղավ, թեև անակնկալ զրանցվեց. ինձ մոտ կանգնած Կորեայի դեսպանը խաղախաղի ժամով ուզեց դարձել իրեն ուղղված հարց չունե՞մ: Ղարաբաղյան խնդրի մասին հարցս զարմացրեց նրան: «Որտե՞ղ է այդ երկիրը, ես դրա մասին ոչինչ չգիտեմ»: Ադա ուսելուն զուգահեռ ստիպված եղավ լսել «Ազգի» լուսանկարչի սեղմ տեղեկությունները, իսկ գոհ եղա՞վ թե՞ ոչ, դժվար է կռահել. խաղախաղի ժամը խնամով բարցնում էր դեմին հայտնված ուրիշ որեւէ դարձեր:

Կենտրոնական Ասիայի բաժնի ղեկավար: *Նրա հետ մեր ծավալուն հարցազրույցը «Ազգի» ընթերցողը դիտի որ հիշի: Թերեւս մեկ նախադասություն, որ առանցքային էր այդ զրույցի մեջ՝ «Ուտոպիա է, թե Ղարաբաղը կարող է դառնալ միջազգայնորեն ճանաչված անկախ պետություն... կամ էլ, որ Հայաստանի բաղկացուցիչ մասը կլինի»: – Ամ. Հ.)*

– Դուք էլի նույն հարցն եք կրկնում: Չեմ կարծում, որ ղարաբաղյան հակամարտության լուծումը կախված է ուրիշ որեւէ երկրի՝ նրա անկախության ճանաչումից: Նրանք, ովքեր ընդգրկված են հակամարտության լուծման փորձն անելու, ամրագրում են մեր հավատը, թե անկախությունը տվյալ խնդրի լուծումը չէ: Հայաստանը չի ճանաչել Ղարաբաղի Հանրապետության անկախությունը, ոչ Ռուսաստանը, ոչ էլ աշխարհի ուրիշ որեւէ պետություն է դա արել: Եթե ուշադրություն դարձնեք Հարավսլավիայի տխուր ճակատագրին, կտեսնեք, որ մի քանի բաժանված պետություններ իրենց անկախ հայտարարելով, հարցը չլուծեցին:

«Ազգ» – Պրն Շրեդլինգ, ըստ ձեզ՝ե՞ս է հեռու այն օրը, երբ միջազգային հանրությունը կճանաչի Ղարաբաղի անկախությունը եւ կենտրոնական Ասիայի բաժնի ղեկավարը դարձյալ նույն խնդիրն է հուզում, այդուհանդերձ ավելորդ չհամարեցի Հայաստանի անկախության տոնի առթիվ հրավիրյալներին Ղարաբաղի անկախության ճանաչման մասին հարցով դիմել: Անտարբերի դարասխան չեղավ, թեև անակնկալ զրանցվեց. ինձ մոտ կանգնած Կորեայի դեսպանը խաղախաղի ժամով ուզեց դարձել՝ իրեն ուղղված հարց չունե՞մ: Ղարաբաղյան խնդրի մասին հարցս զարմացրեց նրան՝ «Որտե՞ղ է այդ երկիրը, ես դրա մասին ոչինչ չգիտեմ»: Ադա ուսելուն զուգահեռ ստիպված եղավ լսել «Ազգի» լուսանկարչի սեղմ տեղեկությունները, իսկ գոհ եղա՞վ թե՞ ոչ, դժվար է կռահել. խաղախաղի ժամը խնամով բարցնում էր դեմին հայտնված ուրիշ որեւէ դարձեր:

Դիտրիխ Շրեդլինգ (ԳԴՀ սոցիալ-դեմոկրատական կուսակցության անդամ) – Եթե Ղարաբաղը Ադրբեջանական Ֆեդերացիայի մաս կազմի, այսինքն, եթե նույն բանն անեն, ինչ Գերմանիայում տարբեր երկրամասերը, ադա 100 տոկոսով Ղարաբաղն էլ իր ներկայացուցչին կուղարկի Բրյուսել: Բայց մտածեք խնդրը բավական երկար ժամանակ կարող է ադրել առանց կարգավիճակի հարցը կարգավորելու, ինչպես Չեչնիայի դարագայում է: Բարեկամական, նորմալ հարաբերությունների դայմաններում ինչքան երկար տեւի այդ վիճակը, այնքան ավելի մեծ է հնարավորությունը նորմալ եւ երկու կողմին բավարարող կարգավիճակ ստանալու: Հարցն այն չէ, որ ճանաչեն մի ղեկավարության, որը միջազգային ճանաչում չունի, այլ այն, որ երկու ժողովուրդները իրար հետ կարողանան խաղաղ դայմաններում ադրել:

«Ազգ» – Նավթի գործոնը թեեւ շատ է խաղարկվում, եւ Ադրբեջանը դրա հետ մեծ հույսեր է կապում, բայց ղարաբաղցիները վստահեցնում են, թե Ադրբեջանից նավթ չի հոսի, եթե իրենց շահերը մոռացության տվեն: Շրջափակված Հայաստանը իր հարեւանների կողմից գազատարի դայթեցման դեմքերը լավ է հիշում:

– Կցանկանայի, որ նավթի գործոնը հայերը կարողանային օգտագործել: Բարեկամական հարաբերությունները դարտադիր են, որ նավթ հոսի: Դրա համար բավական է, որ խաղաղություն լինի:

Ֆրանկ Լամբախ (ԵԱՀԿ Մինսկի խմբի Գերմանիայի ներկայացուցիչ, դեսպան)–Մենք տան (նավթի գործոնին–Ամ. Հ.) դրական դիտի նայենք. փողն այնտեղ է, ուր կայունություն կա: Ներդրումների կարիք զգացվում է տնտեսության մեջ արդյունքների հասնելու համար, իսկ նավթի գործոնը կայունություն կդահովի: Եվ սա՝ լավ է:

Դ. Շրեդլինգ– Ինչպե՞ս եք դուք ստեղծելու այդ կայունությունը, սա է խնդիրը:

Ֆ. Լամբախ– Տարածաշրջանի կոնֆլիկտային հատվածը սատուս քվոյի փոփոխություն չի տեսնում: Եվ այնտեղ տնտեսական իսկական համագործակցություն չկա: Երեւակայությունն անսահման մեծ է ադագան ի՞նչ կբերի: Գործոններից մեկը նավթն է: Նավթը կծախսվի, զենքի համար փող կլինի, իսկ սա նոր հակամարտություն է նշանակում: Բայց ես հավատում եմ, որ միլիարդավոր դոլարների ներդրումները կայունություն են դահանջում: Հետեւաբար դա շատ որոշակի գործոն կլինի խաղաղության ճանադարհին: Դա մարդկանց կստիպի օգտակար փոխզիջումների գնալ: Տարածաշրջանում կայունությունն ավելի լավ կդահովվի, քան խաղաղարար ուժերն են դա անում: Վերջիններս շատ քանկ արժեն, նրանք չեն կարող մշտադես այնտեղ լինել, գիտեք՝ միայն համաձայնության կնքման ժամանակ: Բայց նավթը... ծայրահեղ դեդքում այն ադագա 50 տարիներին կլինի:

«Ազգ»– Պրն Լամբախ, ի՞նչ կարծիք ունեք Ղարաբաղում անցկացված նախագահական ընտրությունների եւ Արկադի Ղուկասյանի մասին:

Ֆ. Լամբախ– Ղուկասյանի ընտրությունը լավ էր. ԼՂ նախագահը բանակցությունների սիջոցով խաղաղություն է ուզում: Նա ճիշտ ընտրված թեկնածու է եւ կարգավորման մեջ փորձ ունի:

ԱՆԱՀԻՏ ՀՈՎՍԵՓՅԱՆ

Բոնն

Բաց նամակ Եվրախորհրդարանի դատգամավոր, Գերմանիայի «Կանաչներ» կուսակցության ներկայացուցիչ տիկին Էլիզաբեթ Շրոթերին

Հարգելի տիկին Շրոթեր,

Հայ-ադրբեջանական հակամարտությանը վերաբերող Եվրախորհրդարան ներկայացրած Ձեր զեկույցն ընթերցելիս մի շարք հարցեր են առաջանում, որոնցից մի քանիսի դատասխանը հարկ ենք համարում ստանալ Ձեզնից: Նախ, ի՞նչ հիմքեր ունեք դնդելու, որ հայ-ադրբեջանական հակամարտությունն արդյունք է «հայ մտավորականության ծայրահեղ ազգայնամոլական ձգտումների», կամ սփյուռքահայությանը համարում եք խաղաղության հասատմանը խոչընդոտող, իսկ Լեռնային Ղարաբաղի իշխանություններին՝ ադտիրնի:

Ինչո՞ւ զեկույցում չեք անդրադարձել տարածաշրջանի բնադահդանական խնդիրներին: Այն դեմքում, երբ մեր նախնական հանդիդումներում շեշտվում էր տեղում եղած հրատադ լուծման համար ուղիներ որոնելու անհրաժեշտությունը: Ահա թե ինչը դետք է լիներ, մեր դատկերացմամբ, Ձեր առաքելության հիմնական նդատակը: Եթե Դուք որոշել էիք անդրադառնալ տարածաշրջանի միայն ռազմաքաղաքական իրավիճակին, ադա ինչո՞ւ ուշադրության միջնորդ դարձրիք Հայաստանի կանաչներին, երբ դատշաճ հրավեր ստանալու լայն հնարավորություններ ունեիք: Ձեզ, կարծում եմ, հայտնի է Հայաստանի կանաչների միության ոչ բարվոք վիճակը, նաեւ այն, որ հանրապետության բնակչության որոշ շրջաններում կանաչներն ընկալվում են որպես «գործարան փակողներ», իսկ Ձեր ուշադրությունից հետո դրան նաեւ ավելացավ «կողմնակալ անձանց ղարաբաղյան հիմնահարցում ներքաշողներ» որակումը:

Երեւանում մեր առաջին հանդիդումը նույնդես անակնկալ էր, երբ դարզ դարձավ, որ Դուք ուղեւորության ընթացքում խորհրդատու եք ընտրել Մոսկվայի «Մեմորիալ» կազմակերդության ներկայացուցչին, որը հայ-ադրբեջանական հիմնահարցում կողմնակալի համբավ ունի: Իմիջիայլոց, միայն Ձեր ուղեւորությունից հետո հրադարակումներից տեղեկացանք, որ գերմանացի Ձեր գաղափարակից գործընկերներն արդեն տարիներ շարունակ օգտվում են «Մեմորիալի» ծառայություններից:

Մենք զարմացանք, որ Դուք Հայաստանի կանաչների միության կոորդինատոր դրն Թադեւոս Գրիգորյանի՝ Ձեր զեկույցի հետ կադված հիմնարար հարցերին դատասխան տալու փոխարեն նոր հարձակման եք անցնում, այս անգամ արդեն Հայաստանի կանաչներին անվանելով «կանաչների հիմնադրույթները մոռացող» եւ նույնիսկ «ծայրահեղական», միաժամանակ մատնացույց անելով լիսաբոնյան գագաթաժողովի 53 մասնակից երկրների համերաշխությունը Ադրբեջանի տարածքային անբաժանելիության խնդրում:

Եթե Դուք եվրականաչների ներկայացուցիչը չլինեիք եւ անդրկովկասյան տարածաշրջանի դատմաշխարհագրական, էթնիկական եւ այլ հարցերում սակավ գիտելիքներ ունենայիք, ադա այդ դեմքում լիսաբոնյան հայտարարության հետ կադված Ձեր ոգեւորությունը միգուցե հնարավոր կլիներ հասկանալ: Սակայն Դուք գրում եք, որ մինչեւ Ղարաբաղ ուղեւորվելը «մանրամասն» ուսումնասիրել եք խնդիրը եւ նամակում բերված փաստերին լավատեղյակ եք: Եվ, այնուհանդերձ, լիսաբոնյան հայտարարությունը եամարում եք արդար եւ «կառուցողական»: Ցավալի փաստ: Դուք կառուցողական եք համարում մի հայտարարություն, որն անհնար է դարձնում Լեռնային Ղարաբաղի հայության իր բնօրրանում նամակում կան գիտականորեն չհիմնավորված դրույթներ, ինչպես նաեւ վիրավորական արտահայտություններ՝ ուղղված հայ ժողովրդին, նրա իշխանություններին ու կազմակերդություններին եւ առանձին անձանց: Այս կադակցությամբ սույն թվի մայիսին Բեռլինում, հանդիդման ժամանակ Դուք խոստացաք երկու ամսվա ընթացքում տալ գրավոր դարզաբանումներ, սակայն առ այսօր Ձեզնից որեւէ դատասխան չենք ստացել: Կարծում եմ, այդ էր նաեւ դատճառներից մեկը, որ մեր տարածաշրջանի ծառագայթային անվտանգությանը նվիրված խորհրդակցությունը տեղի չունեցավ:

Չնայած Ձեր դնդմանը, թե Դուք անկողմնակալ եք եւ չեզոք, նյութերի դիտարկումից դարզ երեւում է, որ այդդես չէ: Մինչեւ անգամ Ղարաբաղի հայության իրավունքաշտանությունը Դուք տհաճությամբ եք ընկալում: Անկողմնակալ եւ չեզոք լինելն ադացուցվում է ոչ թե հայտարարություններով, այլ գիտական փաստերի անաչառ մեկնաբանմամբ: Մի՞թե Ձեր դաշտոնը թույլ է տալիս Ձեզ դատախազի կեցվածք ընդունել եւ նորից շրջանառության մեջ դնել թուրք-ադրբեջանական քարոզչության հորինած վտանգավոր որոշ գաղափարներ:

Հարգելի՝ տիկին Շրոթեր, կատդիական նավթի գործոնը տարածաշրջանում նորույթ չէ: Այդ առումով ուշագրավ է 1918 թ. հուլիսի 7-ի Լենինի հեռագիրն ուղղված Ստալինին, ուր մասնակիորեն ասվում է. «... ամենակարեւորն այն է, որդեսզի... Շահումյանն իմանա գերմանացիների առաջարկը.... Գերմանացիները համաձայնել են կասեցնել Բաքվի վրա թուրքերի հարձակումը, եթե մենք գերմանացիներին երաշխավորենք նավթի մի մասը: Իհարկե՝ մենք կհամաձայնենք»:

Լինելով կանաչների ներկայացուցիչ, Դուք ոչ միայն չդետք է վախենաք ինքնավար, դետությունների ձեւավորումից, այլեւ հակառակը՝ դետք է խրախուսեք այդ գործընթացը, քանի որ այդդիսի համակարգն է երաշխավորում բնության դահդանությունը եւ բնական ու այլ կարգի հարստությունների բնական օգտագործումը, որը տնտեսության կայուն զարգացման հիմք է եւ խաղաղության երաշխիք: Ինքնիշխան երկրներն են, որ ելնելով իրենց ադագայի շահերից, դայմաններ են ստեղծում կայուն բնօգտագործման իրականացման համար, երբ փոխհամաձայնեցվում են բնակչության եւ բնության դահդանության շահերը:

Մենք հույս ենք հայտնում, որ բնադահդանության հիմնահարցերով եւ կայուն խաղաղության հասատմամբ իսկադես մտահոգ կազմակերդությունները եւ առանձին անհատները որոնք երկրագնդի բուսական եւ կենդանական տարատեսակների դահդանության ու դրանց վերարտադրության ֆունկցիաների ադահովման քատագովներն են, իրենց բողոքի ձայնը կբարձրացնեն ի շահ էքսկլյուզիվ ամեն տեսակ ծնունդների եւ բոնությունների կանխման եւ մասնավորադես Լեռնային Ղարաբաղի հարցի արդար լուծման: Վստահ ենք նաեւ, որ մարդկությունն ի վերջո կդատատարտի հայոց ցեղատանության կազմակերդիչ եւ իրականացնող Թուրքիային եւ նրա աջակից Գերմանիային:

Մենք ուրախ կլինենք Ձեզ տեսնելու բնության դահդանության եւ կայուն խաղաղության ու արդարության հասատման համար դայքարող առաջամարտիկների շարքերում:

Հարգանքներով՝

ՎԱՀԱՆ ՍԱՆԱՍԱՐՅԱՆ

Հայաստանի կանաչների միության նախագահ

ԱԶԳ

Միջազգային

Պարատեի «սեւ գոտու» չորրորդ դանի ասպես. Ճապոնիայի վարչապետ Ռիտարո Հասիմոտոն ընդամենը երկու տարի առաջ Ռուսաստանի մասին խոսելիս արեւելյան ասպետներին վայել արհամարհանքով արտահայտվել էր ոչ թե իրրեւ երկրի. այլ՝ «աբխարհագրական տարածքի»: Ենթատեքստը այդ «տարածքն զբաղեցնելու» ակնարկն էր. ինչը համենայն դեպս վերջին հարյուրամյակում եղել է ճապոնացիների մշտական ձգտման ու նկրտումների թիրախը: Բայց ահա թե՛ սպորտում. թե՛ քաղաքականության մեջ թրծված Հասիմոտոն իսկական վարպետին վայել խորագիտությամբ շատ արագ հասկացավ այն հակառակորդի ուժը. որին մտադիր էր հետեւությամբ «գետնել». եւ տեղնուտեղը փոխեց մարտավարությունը: Այժմ նա ձգտում է բարեկամանալ Մոսկվայի հետ. եւ դրա աղացույցը երկու երկրների ղեկավարների բավական հաճախակի դարձած հանդիպումներն են: Վերջին երկու տարում Հասիմոտոյի ու Ելցինի երրորդ այդպիսի հանդիպումը նրանց համատեղ հանգիստն էր Կրասնոյարսկում. անցած շաբաթ ու կիրակի օրը: «Ազգ»-ն այդ առթիվ համապատասխան տեղեկատվություն է հրապարակել: Ընդգծեմ միայն այն. ինչ չեն ասել ռուսական լրատվամիջոցները. չեմ ասել նաեւ մեմ. բայց որի վրա հատուկ ուշադրություն էին հրավիրում միջազգային խոշորագույն ռադիոգործակալությունները: Հասիմոտոն Ելցինին բառացիորեն հիշեցրել է. թե «Ռուսաստանը նախեւառաջ հսկայական ասիական երկիր է»: Եվ խոստացել է սատարել Ասիա-խաղաղօվկիանոսյան տնտեսական համագործակցության մեջ ընդգրկվելու Մոսկվայի ջանքերը: Իսկ այդ մակարդակի հանդիպումներում այսպիսի բաները «հենց այնպես» չեն ասվում: Սա անբարոյ հորդոր է դեմքով «շրջվելու» դեպի Արեւելք: Ավելի ճիշտ՝ արդեն իսկ դեպի Արեւելք շրջվող ռուսներին «գրկաբաց» ընդունելու պատրաստակամության դրսեւորում է. բանզի ակնհայտ է. որ Մոսկվան այժմ ձգտում է իրականացնել «բազմաբեւեռ աշխարհ» ստեղծելու ելցինյան կոնցեպցիան: Ճապոնիան չի կարող ձեռքից բաց թողնել այդ «բեւեռներից» մեկը դառնալու շանսը: Առանց այն էլ նա արդեն իսկ տնտեսական այդպիսի «բեւեռ» է. իսկ ռուսների հետ մերձեցումը նրան կարող է ընձեռել նաեւ քաղաքական «բեւեռ» դառնալու միանգամայն իրական հնարավորություն: Բացի այդ. Մոսկվային դեպի իրենց «քաշելով». ճապոնացիները փորձում են չեզոքացնել ռուս-չինական հարաբերությունների շատ մեծ ջերմացման վտանգը իրենց համար: Իսկ այդպիսի միտումներ կան: Պատահական չէ. որ Չինաստանի նախագահ Ցզյան Ցզեմինի՝ Վաշինգտոնից վերադառնալուց գրեթե անմիջապես հետո. ուր նա շատ էլ մեծ հաջողություններ չհասավ. Պեկին է ուղեւորվում Ռուսաստանի նախագահ Բորիս Ելցինը (դրան դեռ առիթ կունենանք անդրադառնալու).

Ինչ վերաբերում է ռուսներին. ապա «կոմունիզմի» կործանումից եւ դրա հետեւանքով Եվրոպայից «դուրս մղվելուց» հետո նրանք աբխարհում իրենց քաղաքական կշիռը պահպանելու գործնական այլընտրանք չունեն՝ Արեւելք շրջվելուց բացի: Զուր չէ. որ իրրեւ «շնորհակալություն»՝ Ելցինը Կրասնոյարսկում արել է սենսացիոն հայտարարություն. ասելով. թե «Ճապոնիայի եւ Ռուսաստանի միջեւ հաշտության պայմանագիրը կկնքվի առաջիկա երկու տարում»: Խոսքը Երկրորդ աբխարհամարտից հետո կողմերի միջեւ հաշտության պայմանագրի կնքման մասին է. որն այդպես էլ առկախ է մնացել 52 տարի: Չեւականորեն դա նշանակում է. թե Մոսկվայի եւ Տոկիոյի համար պատերազմը մինչեւ հիմա էլ չի ավարտվել. եւ չի ավարտվել հենց ռուսների համառության պատճառով: Նրանք ոչ մի կերպ չեն համաձայնում ճապոնացիներին վերադարձնել հեռավորարեւելյան Իտուրուպ. Կունաշիր. Խաբոմաի եւ Շիկոտան կղզիները. որոնք Ճապոնիայում անվանվում են «հյուսիսային տարածքներ» եւ որոնց վերադարձնելը նրանց համար դարձել է ազգային արժանապատվության խնդիր: Ընդամենը երկու-երեք ամիս առաջ Ելցինը հայտարարեց. թե «կղզիների հարցը կլուծի հաջորդ սերունդը». իսկ ահա այժմ. ինչպես տեսնում ենք. նա կտրուկ փոխել է իր տեսակետը եւ պատրաստակամություն է հայտնում հարցն ապագային չթողնել. նույնիսկ չթողնել «ժառանգություն» հաջորդ նախագահին:

Զգուշավորություն պահպանելով միջազգային դիտորդների բացարձակ մեծամասնությունը նշում էր. թե «Ելցինն ու Հասիմոտոն Կրասնոյարսկում հավանաբար գտել են խնդրի լուծման փոխադարձաբար ընդունելի ինչ-որ եղանակ»: Այսինքն նրանք չեն հավատում. թե Ելցինը կղզիները կվերադարձնի. եւ ենթադրում են. որ խոսքը դրանց համատեղ օգտագործման ինչ-որ միջանկյալ ձեւի մասին է:

ԱՆԴՐԱԴԱՐՁ

Մոսկվայի եւ Տոկիոյի սիրախաղը

ղել է ճապոնացիների մշտական ձգտման ու նկրտումների թիրախը: Բայց ահա թե՛ սպորտում. թե՛ քաղաքականության մեջ թրծված Հասիմոտոն իսկական վարպետին վայել խորագիտությամբ շատ արագ հասկացավ այն հակառակորդի ուժը. որին մտադիր էր հետեւությամբ «գետնել». եւ տեղնուտեղը փոխեց մարտավարությունը: Այժմ նա ձգտում է բարեկամանալ Մոսկվայի հետ. եւ դրա աղացույցը երկու երկրների ղեկավարների բավական հաճախակի դարձած հանդիպումներն են: Վերջին երկու տարում Հասիմոտոյի ու Ելցինի երրորդ այդպիսի հանդիպումը նրանց համատեղ հանգիստն էր Կրասնոյարսկում. անցած շաբաթ ու կիրակի օրը: «Ազգ»-ն այդ առթիվ համապատասխան տեղեկատվություն է հրապարակել: Ընդգծեմ միայն այն. ինչ չեն ասել ռուսական լրատվամիջոցները. չեմ ասել նաեւ մեմ. բայց որի վրա հատուկ ուշադրություն էին հրավիրում միջազգային խոշորագույն ռադիոգործակալությունները: Հասիմոտոն Ելցինին բառացիորեն հիշեցրել է. թե «Ռուսաստանը նախեւառաջ հսկայական ասիական երկիր է»: Եվ խոստացել է սատարել Ասիա-խաղաղօվկիանոսյան տնտեսական համագործակցության մեջ ընդգրկվելու Մոսկվայի ջանքերը: Իսկ այդ մակարդակի հանդիպումներում այսպիսի բաները «հենց այնպես» չեն ասվում: Սա անբարոյ հորդոր է դեմքով «շրջվելու» դեպի Արեւելք: Ավելի ճիշտ՝ արդեն իսկ դեպի Արեւելք շրջվող ռուսներին «գրկաբաց» ընդունելու պատրաստակամության դրսեւորում է. բանզի ակնհայտ է. որ Մոսկվան այժմ ձգտում է իրականացնել «բազմաբեւեռ աշխարհ» ստեղծելու ելցինյան կոնցեպցիան: Ճապոնիան չի կարող ձեռքից բաց թողնել այդ «բեւեռներից» մեկը դառնալու շանսը: Առանց այն էլ նա արդեն իսկ տնտեսական այդպիսի «բեւեռ» է. իսկ ռուսների հետ մերձեցումը նրան կարող է ընձեռել նաեւ քաղաքական «բեւեռ» դառնալու միանգամայն իրական հնարավորություն: Բացի այդ. Մոսկվային դեպի իրենց «քաշելով». ճապոնացիները փորձում են չեզոքացնել ռուս-չինական հարաբերությունների շատ մեծ ջերմացման վտանգը իրենց համար: Իսկ այդպիսի միտումներ կան: Պատահական չէ. որ Չինաստանի նախագահ Ցզյան Ցզեմինի՝ Վաշինգտոնից վերադառնալուց գրեթե անմիջապես հետո. ուր նա շատ էլ մեծ հաջողություններ չհասավ. Պեկին է ուղեւորվում Ռուսաստանի նախագահ Բորիս Ելցինը (դրան դեռ առիթ կունենանք անդրադառնալու).

Ինչ վերաբերում է ռուսներին. ապա «կոմունիզմի» կործանումից եւ դրա հետեւանքով Եվրոպայից «դուրս մղվելուց» հետո նրանք աբխարհում իրենց քաղաքական կշիռը պահպանելու գործնական այլընտրանք չունեն՝ Արեւելք շրջվելուց բացի: Զուր չէ. որ իրրեւ «շնորհակալություն»՝ Ելցինը Կրասնոյարսկում արել է սենսացիոն հայտարարություն. ասելով. թե «Ճապոնիայի եւ Ռուսաստանի միջեւ հաշտության պայմանագիրը կկնքվի առաջիկա երկու տարում»: Խոսքը Երկրորդ աբխարհամարտից հետո կողմերի միջեւ հաշտության պայմանագրի կնքման մասին է. որն այդպես էլ առկախ է մնացել 52 տարի: Չեւականորեն դա նշանակում է. թե Մոսկվայի եւ Տոկիոյի համար պատերազմը մինչեւ հիմա էլ չի ավարտվել. եւ չի ավարտվել հենց ռուսների համառության պատճառով: Նրանք ոչ մի կերպ չեն համաձայնում ճապոնացիներին վերադարձնել հեռավորարեւելյան Իտուրուպ. Կունաշիր. Խաբոմաի եւ Շիկոտան կղզիները. որոնք Ճապոնիայում անվանվում են «հյուսիսային տարածքներ» եւ որոնց վերադարձնելը նրանց համար դարձել է ազգային արժանապատվության խնդիր: Ընդամենը երկու-երեք ամիս առաջ Ելցինը հայտարարեց. թե «կղզիների հարցը կլուծի հաջորդ սերունդը». իսկ ահա այժմ. ինչպես տեսնում ենք. նա կտրուկ փոխել է իր տեսակետը եւ պատրաստակամություն է հայտնում հարցն ապագային չթողնել. նույնիսկ չթողնել «ժառանգություն» հաջորդ նախագահին:

Զգուշավորություն պահպանելով միջազգային դիտորդների բացարձակ մեծամասնությունը նշում էր. թե «Ելցինն ու Հասիմոտոն Կրասնոյարսկում հավանաբար գտել են խնդրի լուծման փոխադարձաբար ընդունելի ինչ-որ եղանակ»: Այսինքն նրանք չեն հավատում. թե Ելցինը կղզիները կվերադարձնի. եւ ենթադրում են. որ խոսքը դրանց համատեղ օգտագործման ինչ-որ միջանկյալ ձեւի մասին է:

Այդ առթիվ կտրական դատողություններ անելն իսկապես դժվար է. այն էլ մեր չափազանց դինամիկ աբխարհաքաղաքական իրադրության մեջ: Սակայն մի բան պարզ է՝ Մոսկվան եւ Տոկիոն «սիրախաղ» են սկսել. եւ դրա մեջ ամեն մեկն իր հեռագնա նպատակներն ունի: Այս «սիրախաղը» կարող է հարկադրել Չինաստանին՝ ավելի սերտ հարաբերություններ խոստանալ Մոսկվային. քան Ճապոնիան է խոստանում: Կարող է հարկադրել նաեւ Արեւմուտքին ու ԱՄՆ-ին՝ բուլացնելու Եվրոպայից. Կովկասից եւ այլ տարածաշրջաններից ռուսներին «դուրս մղելու» ճնշումը. որպեսզի նրանք հարկադրված չլինեն գլխովին նեցվելու Արեւելքի նորահայտ «ռազմավարական դաշնակիցների» գիրկը: Պատկերավոր ասած. Մոսկվան այժմ նման է այն հարուստ հարսնացուին. որին «գայթակղելու» փորձեր են անում. բայց որը նաեւ իր արժեքը գիտակցելով՝ սպասում է. թե «փեսացուներից» ո՞վ ավելի բարձր «գլխագին» կվճարի:

ՌՈՒԲԵՆ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

Կոնգոյի պատերազմից նավթի հոտ է փչում

Չորս ամիս տեւած քաղաքացիական պատերազմից հետո Կոնգոյի նախկին նախագահ Դրնի Սասու Նգեսոյի զինյալները՝ «կոբրաները». հոկտեմբերի վերջերին մայրաքաղաք Բրազավիլից դուրս շպրտեցին նախագահ Պասկալ Լիսուբայի «զուլուներին»: Կառավարական զորքերը. որոնք ամբողջ հակամարտության ընթացքում օգնել էին գեներալ Սասու Նգեսոյի աղսապամբներին. հոկտեմբերի 25-ին գրավեցին Պուենտ Նուար նավթային նավահանգիստը: Հաջորդ օրը Լիսուբան փախավ անհայտ ուղղությամբ. ըստ երեւույթին՝ Բուրկինա Ֆասո կամ Անգոլա. որտեղ իրոք աջակցում էր աղսապամբներին: «Պարի մաչ» հանդեսը հոկտեմբերի 30-ի համարում մեջբերում է Կոնգոյի նախկին վարչապետ Բեռնար Կոլելասի այն խոսքերը. թե միայն Բրազավիլում ավելի քան 5 հազար կյանք խլած կռիվները ոչ թե երկրի հյուսիսային ու հարավային ցեղերի պայքար են. այլ նավթային խոշոր շահերի խաղարկման արդյունք:

Իրոք. Գվինեական ծոցի ափերին ծագող հակամարտություններից մեծ մասամբ նավթի հոտ է փչում: Գաբոնի. երկու Կոնգոների եւ Անգոլայի արեւմուտքում նավթի պաշարները գնահատվում են մոտ 30 միլդ բարել: Կոնգոյում եւ Անգոլայում (որին «Ազգն» արդեն անդրադարձել է) նավթը երկրի գլխավոր հարստությունն է: Կոնգոյում արտահանական եկամուտների 80 տոկոսը եւ պետբյուջեի 60 տոկոսը գոյանում են նավթի շնորհիվ: Ֆրանսիական «Էլֆ» նավթային ընկերության մասնաճյուղերը նավթի հանքավայրերի շահագործման ոլորտում մրցակիցներին՝ «Էքսոնին». «Շելին». եւ «Բրիթիշ փեթրոլիումին» գերազանցում են ինչպես անգոլական միջնաբարձր Կաբինդայի շահանգի ափերին. այնպես էլ Կոնգոյում. որտեղ «Էլֆ Կոնգոն» վերահսկում է նավթահանույթի ավելի քան երկու երրորդը:

Կոնգոյի պատերազմի ավարտը ձեռնտո՞ւ է արդյոք 1993 թ. սեփականաշնորհված ֆրանսիական նավթային ընկերությանը: Մեկնաբաններից շատերի կարծիքով՝ «Էլֆը» շահում է բոլոր դեպքերում: Սակայն հակամարտության արագ հանգուցալուծումը ըստ երեւույթին անակնկալի բերեց «Էլֆի» ղեկավարությանը. որը չկարողացավ ժամանակին կողմնորոշվել եւ բավական մեծ ուշացումով հավատարմության երաշխիքներ տվեց Սասու Նգեսոյին:

Նգեսոյի «ֆրանսիացի բարեկամները» նշում են նրա կասկածամտությունը «Էլֆի» նկատմամբ. որը դեռ վերջերս շարունակ հատկացումներ էր անում նախագահ Լիսուբային. գրեթե անտեսելով գեներալ Նգեսոյին: Սակայն ինքնախնդրությունն անգամ մոռացվում է նավթային խոշոր գործարքների կնքման դեպքում: Ամեն ինչ վկայում է. որ «Էլֆի» ղեկավարությունն արագորեն կհարմարվի նոր պայմաններին. մանավանդ. եթե նկատի ունենանք. որ լավ է ճանաչում նախկին մարքսիստ Սասու Նգեսոյին. որը բոնապալի պես իշխել էր Կոնգոյում 1979-92 թթ.:

Կոնգոյի վերջին պատերազմի ընթացքում Ֆրանսիայի նախագահ Ժակ Շիրակը բավական զգուշավոր գտնվեց եւ բավարարվեց գեներալ Նգեսոյին ռազմօդանավերի ու ռազմահանդերձանքի մատակարարմամբ՝ հատարար միջնորդության իրավունքը վերապահելով Գաբոնի նախագահ Օմար Բոնգոյին: Բայց երբ սեպտեմբերի 4-ին նախագահ Պասկալ Լիսուբան ժամանեց Փարիզ. Շիրակը հրաժարվեց նրան ընդունել: Պատճառը բերեւս այն էր. որ Լիսուբան վայելում է Անգոլայի հակակառավարական Unita խմբավորման աջակցությունը. որի զինյալների հետ մեկտեղ ձգտում էր պատերազմի մեջ ներքաշել նաեւ Կոնգոյի Ժողովրդավարական Հանրապետության նախագահ Կաբիլային: «Էքսպրես» հանդեսի տեղեկությունների համաձայն. Ֆրանսիայի սոցիալիստական կուսակցության ղեկավարները եւս չեն ափսոսում Լիսուբայի տապալումը. քանի որ նա անգոլացի խռովարարների հովանավորն է:

Մինչդեռ. Այժիրում. արդա Ֆրանսիայում զինվորական կրթություն ստացած 54-ամյա գեներալ Սասու Նգեսոն ֆրանսիական բանակի գլխավոր շտաբի ներկայացուցիչների վաղեմի բարեկամն է: Ճիշտ է. Ֆրանսիան պատշաճորեն չէր օգնում Նգեսոյին. բայց նրա «կոբրաների» հետ ուս-ուսի կռվող մի քանի տասնյակ չադցի զինվորներ Կոնգո էին ուղարկվել մի մասնավոր ընկերության կողմից: Նգեսոյին օգնում էին նաեւ Ռուանդայի բանակի նախկին մարտիկները. ինչպես նաեւ Զաիրի հանգուցյալ նախագահ Մոբուտուի հատուկ ստորաբաժանումը. իսկ Լիսուբայի «զուլուներին» օժանդակում էին ուկրաինացի եւ կիրգիզ զինվորական օդաչուներ եւ իսրայելցի հրահանգիչներ:

Աֆրիկայի պատերազմներից հաճախ շահում են զանազան խորհրդականներ եւ ճարտիկ գործարարներ: Տեղի են ունենում պաշտոնական ճակատներ. լույս են տեսնում գրական խոստովանանքներ. ազդագրեր. զինվորական եւ քաղաքացիական խորհրդականները վիթխարի հոնորարներ են ստանում: Դա վերաբերում է հատկապես այն անձանց. որոնց գովերգած թեկնածուն հաջողության է հասնում պատերազմում կամ ընտրություններում: Բայց պարտվողների ջատագովները եւս չեն տուժում եւ արագորեն փոխհատուցում են իրենց կորուստները. քանզի Զաիրի եւ Կոնգոյի պատերազմներից հետո Աֆրիկան մի ահավոր դաս առավ. այն է՝ ավելի լավ է իշխանությանը տիրել զենքի. քան քվեարկության միջոցով:

Պատրաստեց
ՊԵՏՐՈՍ ԲԵՇԻՐՅԱՆԸ

ՏԱՐԱՌՈՏ

Ռ. Դենքթաբը պատրաստում է կասեցնել բանակցությունները

Նոյեմբերի 4-ին ՄԱԿ-ի գլխավոր քարտուղար Կոֆի Անանի հետ հանդիպման ժամանակ Կիպրոսի թուրքական համայնքի ղեկավար Ռաուֆ Դենկթաշը հայտարարել է. թե Կիպրոսի հետ բանակցությունները կկասեցվեն. եթե վերջինիս անդամակցության հարցով բանակցություններ սկսվեն Եվրամիության հետ: Նա ավելացրել է. թե կասեցումից հետո թուրքական կողմը բանակցելու առաջարկները կընդունի միայն այն ժամանակ. երբ Կիպրոսի իշխանությունները պաշտոնապես կճանաչեն Հյուսիսային Կիպրոսի թուրքական պետությունը: Ինչպես հայտնի է. թուրքական կողմը 1974 թ. բռնագրավումից հետո. տարբեր պատրվակներով ձախողում է կղզին վերամիացնելու նպատակով ՄԱԿ-ի կամ այլ երկրների կողմից միջնորդված բանակցությունները:

«ՈՒՆԵՐ»-«ԵՐԵՎԱՆ»

Թուրքիա-Բելառուս ռազմական գործակցության պայմանագիր

ՄԻՆՍԿ. 5 ՆՈՅԵՄԲԵՐ. ՆՈՅՍԱՆ ՏՊՊԱՆ. Թուրքիայի եւ Բելառուսի միջեւ նոյեմբերի 4-ին Մինսկում ռազմական համագործակցության պայմանագիր են ստորագրել Թուրքիայի զինված ուժերի գլխավոր շտաբի պետ Քարադայն ու Բելառուսի պաշտպանության նախարար Ալեքսանդր Չումակովը: Ըստ ԻՏԱՐ-ՏԱՍՍ-ի. Քարադայն ընդգծել է. որ առկա են երկկողմանի կապերն ընդարձակելու լավ հնարավորություններ: Ինչպես տեղեկացնում է «Ազատություն» ռադիոկայանը. պայմանագրով նախատեսվում է համագործակցություն զինվորական ուսուցման եւ ռազմական արդյունաբերության բնագավառներում: Կողմերը պայմանավորվել են նաեւ տեխնոլոգիաներ եւ տեղակատվություն փոխանակելու հարցում:

Բելառուսը հիշեցնում է ԽՍՀՄ-ը

«Ռասիկանության եւ ՆԳՆ հատուկ ջոկատների կողմից Բելառուսի ժողովրդի նկատմամբ բանեցված ճնշումները հիշեցնում են խորհրդային օրերը». նշվել է ՄԱԿ-ի մարդու իրավունքների հանձնաժողովի համար 18 մասնագետների կողմից պատրաստված ուսումնասիրության մեջ: Մասնագետները կոչ են արել Բելառուսի իշխանություններին վերացնելու խոսքի. մամուլի եւ խաղաղ ցույցեր կատարելու ազատության դեմ հարուցված խոչընդոտները: Հանձնախմբին կից Բելառուսի ներկայացուցիչը հայտնել է. թե տնտեսական դժվարությունները եւ ոճրագործությունների համեմատական աճը ժողովրդավարական բարեփոխումների դանդաղեցման հիմնական պատճառներն են:

Գերմանիա. Հայտնաբերվել է քուրդ հրձիգը

Նոյեմբերի 4-ին Գերմանիայի դաշնակցային դատախազությունը հայտնել է. թե գերմանական դատարանը Թուրքիայի ազգությամբ քուրդ մի քաղաքացու ամբաստանել է 1993 թ. Գերմանիայի տարածքում թուրքերի բնակարաններ հրդեհելու հանցանքով: Ֆայսալ Տ. անունով հայտնի 47-ամյա քուրդը. որն օգտագործել է նաեւ Կանի Յըլմազ ծածկանունը. 1994 թ. հոկտեմբերին ձերբակալվել է Բրիտանիայում եւ Բոննի պահանջով փոխադրվել Գերմանիա:

«ՈՒՆԵՐ»-«ԵՐԵՎԱՆ»

ԱԶԳ

Մշակույթ

«Քո նկարները նման են Հայաստանին. գեղեցիկ, արտահայտիչ եւ բացառիկ»

Կարեն Սմբատյանի շոնդալից հաջողությունը Գերմանիայում

«Սմբատյանի աշխատանքները իրենց ինքնատիպությամբ, ավանդույթներով հարուստ մշակույթի խորունկ արմատների վկայությունն են: Պարզ արտահայտչաձեւերի մեջ նա կարողանում է ներքնաշխարհի բացահայտման մի բացառիկ պատկեր ստեղծել: Նրա նկարները երբեմն հիշեցնում են Պիկասոյին ու Միրոյին եւ սակայն Սմբատյանի աշխատանքները միանգամայն ինքնատիպ ու բացառիկ են»: «Այուդդոյչե Ցայթունգ», 17.9.1997

«Ի գունագեղ, անծանոթ աշխարհ» վերնագիրը հայտնվեց գերմանական ամենահայտնի ու ամենաընթերցվող «Այուդդոյչե Ցայթունգ» օրաթերթի ս. թ. սեպտեմբերի 17-ի համարում: «Առեղծվածային ու չքնաղ պատկերներ», ծայնակցեց մեկ ուրիշը նույն օրվա գորշ, անձրեւային երկնի տակ, ուր հարյուրավոր այցելուներ համառորեն որդան կարմիր, ծիրանագույն, դեղին, կանաչ ու կապույտ էին վայելում: Խոշոր, ուշագրավ վերնագրերն ասես միչ են, ենթավերնագրերում այլեւս հայ գեղանկարիչ Կարեն Սմբատյանը «գայթակղում ու տանում է մեզ մի հեքիաթային աշխարհ»: Նրա նկարների եռօրյա ցուցահանդեսը Հայմշտեթենի ժողկրթարանի տնակում փրկարար մի հեղաշրջում եղավ... հենց այդ տնակի համար: «Անկեղծ ասած, որոշել էինք այս հաստատությունը խնդել, բացման խոսքում ասաց խաղախոսն Հայնց Հիլգերը, սակայն Կարեն Սմբատյանի գունեղ գեղանկարչության եւ հայկական արվեստի այս ապշեցուցիչ կոլորիտի շնորհիվ մի վստահ որոշում կկայացվի այս տունը հիմնավորապես վերանորոգելու ու արվեստի մի օջախ ստեղծելու մասին»: Մինչ այդ տնակի երեք սրահներում ցուցադրվում է առաջին անգամ... Կարեն Սմբատյանը:

Այդ ընթացքում հայտնի կոլեկցիոներ Գաբրիելլե Մյուլլեր-Բուշը հիանում է հավանաբար իր եզակի Պիկասոյի օրիգինալի կողքին կախված վեց օրիգինալ «Սմբատյաններով»: Այս ամենին անմասն է, սակայն, Գերդ անունով մի գերմանացի, որն արդեն մեկ ժամ անսահման տխրությամբ դիտում է այլեւս վաճառված «Կարմիր նաստուրտոնը»: Երեւի առաջին անգամ իր ողջ կյանքում թերահավատ է Գերդ անունով մի գերմանացի իմաստուն խոսքերի, ինչպես. «Տասը չափիր, մեկ կտրիր»-ի հանդեպ: «Անսահման հոգատար եմ, որ Ձեր այս նկարը ունենալու բախտին արժանացա», արդեն գրում էր տպավորությունների գրքում «Կարմիր նաստուրտոնի» վճռական տիրուհին:

– Պրն Սմբատյան, առաջին անգամ ցուցադրվելով Արեւմտյան Գերմանիայում, ի՞նչ տպավորություններ ունեք գերմանացի ժողովրդից:

– Հիացմունք: Արդեն հայտնի կարծիքը գերմանացու ճշտապահության ու ազնվության մասին մեկ անգամ եւս հաստատվեց: Առավելապես գերմանացի ժողովրդի օրինապահությունն է, որը անվիճելիորեն այս երկրի տնտեսական եւ սոցիալական նվաճումների ամենակարեւոր հիմնաքարն է:

Այս ցուցահանդեսը բարձրագույն գնահատական է հայ արվեստի ու հայ անվան մի երկրում, ուր գնահատականներ կամ ընդհանրապես չեն տրվում, կամ էլ չափազանց ժլատորեն են տրվում:

«Ժլատ» գնահատականների մի քանի վկայություններ. «Ուժեղ գույները եւ պոեզիան միահյուսվում են լռելյայն: Զգացմունքը այդ ընկղմվում է ամենախորքերում»: Էրիկ Լինդենբերգ; (Գերմանացի նշանավոր նկարիչ)

«Չինաղ մի հրավառություն...»:

Մի այցելու

«Քո նկարները նման են Հայաստանին. գեղեցիկ, արտահայտիչ եւ բացառիկ: Ես սիրեցի քեզ, քո նկարները եւ Հայաստանը»:

Ռայներ Կարաստֆերյան

– Ոչ ոքի համար այլեւս գաղտնիք չէ, թե ինչ անպատմելի ծանր վիճակում է այսօրվա հայ արվեստագետն ու մշակույթը: Գերմանուհի մի լրագրող Հայաստանից վերադառնալուց հետո հարցրեց ինձ աղջամուղջ. «Ինչպե՞ս հասկանամ ձեր ֆենոմենը: Ցուրաքանչյուր երկրորդը արվեստագետ էր, չնայած անհույս աղքատությանը: Ամենակարեւորը բոլորի համար անկախությունն էր...»:

– Անկախությունը հայ ազգի գոյատեւման ամենակարեւոր պայմանն է: Ցավոք, այսօր չափազանց ծանր է ոչ միայն հայ նկարչի՝ հայ մշակույթի վիճակը: Որովհետեւ այսօր Հայաստանում չկա գնողունակություն, որի հետեւանքով նկարներ չեն վաճառվում: Այս իրավիճակից ելնելով սփյուռքահայ առեւտրականները, տեսնելով մեր ծանրագույն վիճակը, նսեմացնող գներով տիրանում են մեր նկարներին եւ տասնապատիկ բարձր գներով վաճառում արտասահմանում: Ամենաանկախ, ամենահամարձակ ու ամենահինքնուրույն համարվող հայ նկարիչների ջոկատն այսօր քայքայվում է, շատերը հեռանում են պարզապես...

– Ակամա հիշեցի Ռուբեն Հախվերդյանի երգը. «Լավագույն տղերքը հեռանում են, օտար ափերում բախտ որոնում...»:

– Լավ, անշուշտ եւ ցավոք կեցությունն է որոշում գիտակցությունը՝ չունես տրանսպորտի փող, հացի ու ներկի փող եւ այլն... Բնականաբար ոչ միայն հիասթափություն է առաջանում, այլեւ շատ ավելի մոայլ մտքեր կամ մոայլ քայլերի դիմելու մտադրություններ:

– Ի՞նչ քայլերի, օրինակ...

– Թողնել-գնալու, թողնել-փախչելու, ամեն ինչ, բացի ստեղծագործելը, նկարելը, բայց... Նորին մեծություն բայցը: Կան ու եղել են արվեստագետներ, որոնք անկախ իրավիճակներից շարունակում են ստեղծագործել: Կան արվեստագետներ, որոնք անհրաժեշտ շատ բաներից իրենց զրկում են՝ թուղթ ու ներկ առնելու համար...

– Ինչպե՞ս նման արվեստագետներ կան Հայաստանում:

– Քիչ:

– Կարելի է ուրեմն ասել, որ արվեստագետները Հայաստանում հակված են հեռանալու ու փաստորեն նաեւ հեռանում են...

– Կոպիտ չինչի կարծիքս, բայց Հայաստանից հեռանում են հիմնականում թույլ արվեստագետները: Հայաստանի հողին կպած ու Հայաստանում աղրող արվեստագետները հիմնականում ուժեղ արվեստագետներ են: Պատկերացնենք, որ Վարուժան Վարդանյանը թողնի ու հեռանա Հայաստանից: Անհնար է: Կամ Գրիգոր Խանջյանը, Հակոբ Հակոբյանը հանկարծ լքեն Հայաստանը...

– Պատկերացրեք, որ այս հարցազրույցով Ձեզ հնարավորություն է տրվում մի կարեւոր հարց բարձրացնել, որեւէ կարեւոր միստիկ իրականացնել...

– Ոչ թե պատկերացնենք, այլ վստահ լինենք, որ չկա ավելի կարեւոր բան, քան հայոց դպրության ու մշակույթի հարցը: Այս հենքի վրա արժե բարձրացնել Թերլեմեզյանի անվան ուսումնարանի կարեւոր հարցը, որ ուսումնարանն այսուհետեւ վերանորոգվի ու սանա գեղարվեստի ակադեմիայի կարգավիճակ: Միջոցները... ոչ ոքի համար գաղտնիք չէ, թե որքան անիմաստ ու ինքնանպատակ յուրացվող միջոցներ կարող էին ազգահաճո ու շնորհակալ այս գործի համար ներդրվել: Թերլեմեզյանի անվան ուսումնարանն ավելին է, քան ուսումնարանը: Սա արվեստների մի ակադեմիա է, որն ունեցել է եւ ունի հայ ազգային գեղանկարչության զարգացման կարեւոր առաքելությունը: Հույս ունեմ, որ բարձրացվող այս հարցը արժանի արձագանք կգտնի համապատասխան պետական մարմիններում, ինչպես նաեւ արվեստագետների շրջաններում, որոնց համագործակցությամբ ու սատարմամբ կկարողանանք այս ավանդույթներով հարուստ կրթօջախը փրկել ակնհայտ ու վերջնական կործանումից... Շտապանք, մենք բոլորս շատ ենք պարտական այս դպրոցին...

– Հայ արվեստի ու գրականության պատմությունը նշանավոր մշակույթների բազմաթիվ օրինակներ է տվել, որոնք ժողովրդի ճգնաժամային պահերին նահանջող դերում չեն մնացել: Կա՞ն այսօր Հայաստանում արվեստագետներ կամ ստեղծագործական միություններ, որոնք հասարակական ու քաղաքական ոլորտներում բարերար առաքելությունը կամ միտումն ունեն:

– Այդպիսի միտում չկա, քանի որ արվեստագետը արհամարհված է: Վերջերս պաշտոնական թերթերից մեկի թղթակցին տրված մի հարցազրույցում խոսեցի արվեստագետներիս սոցիալական անմխիթար վիճակի մասին: Նախկինում կառավարությունը երբեմն նկարներ էր պատվիրում ու գնում: Այսպիսով վիճակը փոքրիշատե բարելավվում էր: Հարցրեց, թե ինչ կուզենայի: Ասացի, որ իմ ցուցահանդեսներ կազմակերպելու ցանկությունը բազմիցս ասել եմ որոշ պետական ազդեցիկ պաշտոնյաների, որոնք իմ իսկ ընկերներն են եղել: Եվ դա ոչ ինձ համար: Օրինակ, ես հնարավորություն ունեմ Վաշինգտոնի «Կանոն» հայտնի ցուցասրահում, որտեղ ես իմ նկարներն եմ ցուցադրում, անհատական ցուցահանդես կազմակերպելու, որին կարող ենք պետական կարեւոր մարմինների ու հայամետ սպասավորների հրավիրել, որոնք մեր քաղաքական հարաբերություններում մեծ նշանակություն կունենան: Ես գյուղ չեմ անում: Նայեք հրեաներին: Այստեղ՝ Գերմանիայում առիթ ունեցա մի հրեայի՝ Ֆելդմանի հետ գալ մի հրեայի՝ Ֆելդմանի հետ գալ ներկա գտնվելու: Հաջողված մի առաքելություն. գերմանացի հանդիսատեսը հոսկայաչափ երգում էր հրեական երգեր: Մեկնաբանություններն ավելորդ են: Ասեմ, որ իմ նեղանձնական շահագրգռվածության հարցը չէ սա: Ինչեւէ, խնդիրն այն է, որ ոչ թե չեն անում, այլ չեն էլ լսում: Արդյունքում... ինչ ասեմ, ադրում ենք էլի...

– Իսկ Ձեր գրական ստեղծագործությունների մասին...

– Օրագրության ժանրը մեր հայ գրականության մեջ, ցավոք, տարածված չէ: Իմ օրագրերը, որ ինձանից հետո պիտի հրատարակվեն, ինձ համար մի այլ ստեղծագործական աշխարհ է:

– Ձեր նկարների եռօրյա ցուցահանդեսը մի աննկարագրելի սենսացիա եղավ այս շրջանի գերմանական հասարակության համար: Գերմանացի շատ նկարիչների երազանքն է ցուցադրման հենց առաջին օրը համարյա բոլոր նկարները վաճառելը...

– Վստահ եմ, որ նույնը կկատարվեր մեր շատ այլ տաղանդավոր նկարիչների հետ, եթե նրանք նույնքան ցուցադրվելու առիթ ունենային՝ միեւնույն է, թե աշխարհի որ անկյունում: Մտածենք այս մասին...

Հարցազրույցը՝
ՎԱՆՈՒՀԻ ՔԻԹԹԵԼ-ԲԱՂՈՅԱՆԻ
Մյունխեն, 18.9.1997

Կարեն Սմբատյանը. Մյունխենի Կիրխայմեի քաղաքապետ Հայնց Հիլգերը եւ ցուցահանդես կազմակերպիչ Դորիս Էհրի-Յակոբը

ՄԱՐՇԱԿ-110

Բազմաբեղուն Մարշակը

Գրողը գրողի մասին

Վիսարիոն Բելինսկին բանաձեւել է՝ մանկական գրող չեն դառնում, ծնվում են: Այս բնորոշումը անվերապահորեն վերաբերում է ռուս մեծ մանկագիր Սամուիլ Մարշակին:

Մարշակը իր բազմաժանր ստեղծագործությամբ ապացուցեց, որ բառի իսկական իմաստով չկան զուտ մանկական եւ ոչ մանկական գրողներ, այլ կան լավ ու վատ գրողներ, որ մանկական բանաստեղծությունը, երկը, որքան էլ հասցեագրված լինեն փոքրերին, պիտի հուզեն մեծերին: Նա իր «Հրդեհ», «Չախոռդ վարպետը», «Կատվի տնակը», «Փոստը», «Տասներկու ամիսներ», «Միստր Թվիստր», «Հեքիաթ հիմար մկնիկի մասին» չափածո հեքիաթներով, պիեսներով, խաղացկուն, աշխույժ բանաստեղծություններով, Շեքսպիրից, Բյոռնսից, Շելլիից, Պետֆիից, Ռոդարիից, Հայնեից կատարած թարգմանություններով դարձավ ռուս եւ այլազգի ընթերցողների սիրելի գրողը եւ բարձրացավ ընտրյալների պատվանդանին:

Կորնեյ Չուկովսկին իրավացիորեն սրամտել է, որ գրականության մեջ ունենք հինգ Մարշակ՝ մանկական գրող, դրամատուրգ, ինարերգու, թարգմանիչ եւ երգիծաբան: Հիրավի, այս բոլոր ժանրերում նա ունի իր խիստ ինքնատիպ ոճը, եւ հինգ մարշակները ծուլվելով՝ դառնում են մի վիթխարի Մարշակ:

Մարշակը միշտ մնաց որպես գրական կյանքի առինքնող կենտրոն, նրա բնակարանը դարձավ մի օջախ: Մարշակի անգլիացի բարեկամ էմրիս Խյուզը պատկերավոր է ասել. «Մի օրում Մարշակի մոտ ավելի շատ ժողովուրդ է գնում, քան՝ անգլիական պառլամենտի նիստերին»:

Ինչպես բոլորը, ես էլ ունեմ իմ Մարշակը: Ես կյանքում Մարշակին տեսել ու լսել եմ մի անգամ, Մոսկվայում սովորելու ժամանակ: 1957 թ. գրողների միությունում Հաղթանակի օրվան նվիրված երեկո էր, որին մասնակցում էին Բ. Պոլեւոյը, Կ. Սիմոնովը, Ա. Ժարովը, Ա. Բարտոն, Ալ. Սուրկովը... երբ ձայնը տրվեց Մարշակին, դահլիճը թնդաց ծափերից: Մարշակը կարդաց Կուկրինիկս եղբայրների սուր նկարների համար պատերազմի տարիների գրված քառյակներից:

Երբ Երեւանի պատանի հանդիսատեսի թատրոնը բեմադրում էր Մարշակի «Վշից փախչողը երջանկություն չի տեսնի» հեքիաթը, ես գրեցի ներկայացման երգերի տեքստերը (երաժշտությունը գրեց Գրիգոր Հախինյանը): Իմ թարգմանությամբ լույս է



տեսել «Հեքիաթ հիմար մկնիկի մասին» գրքույկը եւ «Ինչու կատվին կոչեցին կատու», «Հեքիաթ գինվորի եւ արքայի մասին» գործերը: Մարշակը ինձ եւ հայերիս համար նաեւ թանկ է նրանով, որ հրաշալի է թարգմանել Հովհաննես Թումանյանի «Շունն ու կատուն» եւ «Մի կաթիլ մեղրը» լեգենդները:

Հայ երեխաները սիրով են կարդում մեծ մանկագրի գործերը: Դրա վկայությունն էր Արտասահմանյան երկրների հետ բարեկամության ընկերության դահլիճում կազմակերպված երեկոն, որը նվիրված էր Մարշակի ծննդյան 110-ամյակին: Դահլիճը ջերմորեն ընդունեց Շահումյանի անվան դպրոցի տիկնիկային թատրոնի փոքրիկ արտիստներին, որոնք ներկայացրին Մարշակի «Տնակը» հեքիաթն ու բանաստեղծությունները:

Ինչպես ամեն մի իսկական մանկական գրողի, Մարշակի ստեղծագործությունը, սիրելի հերոսները բարեկամանում են փոքրիկ ընթերցողի հետ, հարուստացնում ու գեղեցկացնում նրա հոգին՝ սերնդեսերունդ միշտ նորանալով, ծնվելով ու մեծանալով ամեն մանկան հետ:

ՄՈՒՐԵՆ ՄՈՒՐԱԴՅԱՆ

Ալիսիա Կիրակոսյանը Հայաստանում

Հանդիպում Երեւանի պետական համալսարանում

Շարենցյան հոբելյանի կապակցությամբ Հայաստան է հրավիրվել սփյուռքահայ ինարերգության վառ աստղերից մեկը՝ Ալիսիա Կիրակոսյանը: Բանաստեղծուհին իր հետ բերել է հին եւ նոր, տպագրված եւ անտիպ բանաստեղծությունների ամբողջական ժողովածուն, որը մտադիր է տպագրել Հայաստանում: Ինչպես գիտենք, Ալիսիա Կիրակոսյանի՝ Հայաստանում լույս տեսած առաջին ժողովածուն թարգմանություն էր իսպաներենից եւ պարունակում էր որոշ թերություններ: Այժմ արդեն կատարելապես տիրապետելով հայերենին, բանաստեղծուհին վերանայել եւ սրբագրել է այդ թարգմանությունները: Մի շարք միջոցառումների մասնակցելուց հետո, ի թիվս որոնց թիվ 52 դպրոցում «Ալիսիա Կիրակոսյան պոեզիայի ակումբի» բացումը, բանաստեղծուհին ավանդական այցելության եկավ համալսարան: Ուսանողներին հետաքրքրում էր ստեղծագործական պրոցեսի հետ կապված ամեն ինչ՝ արդյո՞ք սիրո բանաստեղծուհին մշտապես սիրահարված է, թե՞ բանաստեղծությունը երբեմն երեւակայության արգասիք է, հե՞շտ է արդյոք մնալ ռոմանտիկ այն երկրում՝ ԱՄՆ-ում, ուր գերիշխում է պրագմատիզմը: Խոսվեց նաեւ Հայաստանի պոետների եւ գրողների ծանր վիճակի մասին: Ալիսիա Կիրակոսյանը հայտնեց, որ գրողների միությունը վճռել է «Նոր դար» ամսագրի շուրջ համախմբել տաղանդավոր երիտասարդներին: «Իսկապես տաղանդավորներին, շեշտեց բանաստեղծուհին: Առհասարակ չկա հայ, որ բանաստեղծություն գրած չլինի»:

– Սակայն կան «ոչ տաղանդավորներ», որ գնում են եւ տպագրվում են արտասահմանում, մրցանակներ են շահում, ասաց մեկը դահլիճից:

Ի պատասխան բանաստեղծուհին պատմեց, թե ինչպես աղջկա հետ որոշեցին գրել մի անհեթեթություն եւ ներկայացնել մրցույթի: Իսկ որպեսզի զավեշտն ավելի սուր դառնա, ստորագրեցին՝ Էշ-Ավանակ: Որոշ ժամանակ անց ստացան պատվոգիր պարոն Էշ-Ավանակի անունով:

Ուսանողներին հետաքրքրեց նաեւ, թե սփյուռքի բազմաթիվ գաղութների միջեւ կա՞ արդյոք մշակութային համագործակցություն, կապ... Պարզվեց, որ ոչ: Սփյուռքահայ բանաստեղծներն ու գրողները շատ անգամ իրար չեն ճանաչում: Գաղութների կապը անհատական մակարդակից չի բարձրանում եւ ապրիլի 24-ի միասնական ցույցերից այն կողմ չի անցնում: Այս ոչ դրական երեւույթը գալիս է ապացուցելու մի շատ կարեւոր փաստ՝ բոլոր ճանապարհները տանում են Հայաստան: Անմահանալու համար Գիլգամեշը բռնեց Մեծ Հայրի ճանապարհը՝ «դեպի անմահ Աստվածների երկիրը»:

Ի. ՍԱՐՈՅԱՆ

ԽՆԴԻՐՆԵՐ

«Հայկական սպորտը լուրջ փոփոխությունների կարիք ունի»

Հայաստանի մշակույթի, երիտասարդության հարցերի եւ սպորտի փոխնախարար Իշխան Զաքարյանի հարցազրույցը Արմենպրեսի թղթակցին

–Պարոն Զաքարյան, վերջերս տեղի ունեցած մամուլի ասուլիսի ժամանակ Դուք սպորտի ոլորտում բազմաթիվ պրոբլեմներ նշեցիք: Դրանցից որո՞նք կառանձնացնեիք որպես առաջնահերթ:

–Նախ եւ առաջ կցանկանայի նշել մարզական կառույցների, մարզադպրոցների եւ մարզաբազաների մեկ համակարգում կենտրոնացնելու խնդիրը: Իմ կարծիքով, պետք է սկսել սրանից, թե չէ սացվում է այնպես, որ նախարարության համակարգում գտնվում է այդ բոլոր օբյեկտների միայն 8 տոկոսը, իսկ մնացած բոլորը մեր իրավասությունից դուրս են մնում, ինչը առնվազն սխալ է: Այս ուղղությամբ արդեն որոշ աշխատանք տարվել եւ տարվում է, մասնավորապես, «Հրազդան» մարզահամալիրը այսօր մեր նախարարության համակարգում է: Պետք է լուծել մարզական դպրոցների պատկանելության հարցը, քանի որ նրանց մեծամասնությունը ներկայումս նույնիսկ գիտության եւ կրթության նախարարություն համակարգում չէ, այլ անցել է մարզային, քաղաքային, շրջանային համայնքներին:

Հետաքրքիր իրավիճակ է ստեղծվում. նույնիսկ եզակի մարզակառույցները, օրինակ, հանրապետական հեծանվահրապարակը, մեր նախարարության համակարգում չեն: Նման պրոբլեմ կարող ենք որեւէ գործ տանել, եթե դրա իրավունքը մեզ չի տրված:

Եւս մեկ օրինակ կարծում եմ, որ բոլորը լավ են հասկանում կադրային խնդրի կարեւորությունը: Ակնհայտ է, որ որոշ մարզադպրոցներում անհիմն ուռճացնում են հաստիքացուցակները, այն դեպքում, երբ նույն աշխատանքը կարելի է տանել 25 աշխատակցով, չգիտես ինչու այնտեղ 100 մարդ է աշխատում: Ավելի ծիծաղելի, գիտես ինչու եւ չես ցանկանում հանդուրժել նման իրավիճակը: Բայց մենք ոչինչ չենք կարող անել, քանի որ այդ մարզադպրոցները մեր իրավասության տակ չեն:

–Որպես ՀՀ ԱԺ պատգամավոր, Դուք չե՞ք կարծում, որ ժամանակն է, որ ԱԺ ընդունի սպորտի մասին օրենքը, որը շատ կնպաստի Հայաստանում սպորտի զարգացմանը:

–Այո, սպորտի մասին օրենքը շատ մեծ նշանակություն կունենա նրա զարգացման գործում, եւ ես, ԱԺ տարբեր հանձնաժողովների անդամների հետ, ձեռնամուխ եմ եղել այդ օրենքի ստեղծմանը: Այսօր մենք ունենք այդ օրենքի մի քանի տարբերակ եւ առայժմ չենք շտապում դրանք հրապարակել, մինչեւ որ չընտրվի ամենալավը, որը բոլոր տարբերակների լավագույն համադրումը կլինի:

–Հաճախ կարելի է լսել այն կարծիքը, թե սպորտը Հայաստանում առայժմ հեռու է ուշադրության կենտրոնում լինելուց, պետական համակարգում իր արժանի տեղը դեռեւս չի գրավել:

–Ես այդպես չեմ կարծում: Այն հանգամանքը, որ այսօր հայկական շախմատը համաշխարհային ուշադրության է արժանացել, Հայաստանի մարզիկները փաստորեն աշխարհի կամ Եվրոպայի ոչ մի առաջնություն կամ գավաթի խաղարկություն բաց չեն թողել, իսկ դա մոտ 26 մրցաշար էր, արդեն վկայում է այն մասին, որ սպորտը Հայաստանում միշտ ուշադրության տեսադաշտում է պետության կողմից: Սպորտի օրենքի մասին ես արդեն խոսեցի, նշեմ, որ չնայած պետության ծանր ֆինանսական վիճակին, ՀՀ կառավարությունը ոչ միայն չի կրճատել մարզական ծախսերը, այլեւ նախատեսվել են մարզեւատրումներ լավագույն մարզիկների համար, դրա օրինակը արդեն եղավ Անկախության տոնի նախօրեին ՀՀ մարզական ակտիվի հետ վարչապետ Ռոբերտ Քոչարյանի հանդիպման ժամանակ:

Այլ հարց է, որ այսօր սպորտը հազար ու մի պրոբլեմ ունի, որ անհրաժեշտ է որոշ փոփոխություններ անել, օգտագործել այն ամենը, ինչը կարող է սպորտին օգնել: Իմ կարծիքով, այդ խնդիրները լուծելի են եւ արդեն սկսել են լուծվել: Ավելին, ոմանց կարծիքով, սպորտում բարեփոխումները շատ արագ տեմպով են ընթանում, բայց, ըստ իս, դա ժամանակի հրամայականն է: Ասեմ նաեւ, որ միայն ֆինանսների ոգեշնչում օգտագործումով, ավելորդ հաստիքներից ազատվելով, մենք լիովին կարող ենք սպորտի հիմնական պրոբլեմները լուծել նույնիսկ ներկայիս բյուջեի սահմանում: Ոչ մի լրացուցիչ միջոց մենք չենք խնդրի, ուղղակի պետք է աշխատել ոգեշնչել, չփոշիացնել ունեցած գումարը:

Ավելացնեմ նաեւ, որ այսօր Հայաստանը նորից ընդունել եւ ընդունում է ամենաբարձր կարգի միջազգային մրցումներ, պլանավորում ենք դա բարի ավանդույթ դարձնել:

–Այսինքն, Դուք առաջնահերթ կարեւորություն եք տալիս ֆեդերացիաների աշխատանքին:

–Այո: Մարզաձեւերի բոլոր ֆեդերացիաները կոչված են զարգացնել այս կամ այն մարզաձեւը Հայաստանում, բայց որոշ ֆեդերացիաներ դրա փոխարեն հիմնականում զբաղված են միայն արտասահմանյան մրցաշարերի թիմեր ուղարկելով: Դա շատ կարեւոր է, բայց չի կարելի կենտրոնանալ միայն այդ հարցի վրա, այն էլ՝ պետությունից ֆինանսավորելու նանսավորում պահանջելով կամ էլ հաճախակի կասկածելի հովանավորների օգնությանը դիմելով: Եթե, օրինակ, թիմի հետ արտասահման մեկնի 1-2 հովանավոր, ես այստեղ ոչ մի պրոբլեմ չեմ տեսնում, բայց ոչ մի պրոբլեմ չեմ տեսնում, բայց ինչպես հասկանալ այն, որ արտասահման են մեկնում հաճախ տասնյակ մարդիկ, որոնցից շատերը ետ չեն վերադառնում:

Եթե որեւէ ֆեդերացիա ինչ-որ հարց ունի լուծելու պետության հետ, արդա մենք միշտ պատրաստ ենք համագործակցել, ուղղակի պետք է վերացնել նրանց աշխատանքի բացասական կողմերը: Այդ համագործակցությունը առավել եւս կարեւոր է, եթե հաշվի առնենք, որ ֆեդերացիաները շատ մեծ պոտենցիալ ունեն: Նրանց կազմում են, իսկ հաճախ ղեկավարներն են մեր երկրի հեղինակավոր մարդիկ, կառավարության անդամներ, պետական եւ հասարակական գործիչներ: Ֆեդերացիաներն, ի վերջո, լինելով հասարակական կազմակերպություններ, պետության մի մասնիկն են, նրանք նույնպես ներկայացնում են մեր պետությունը արտասահմանում:

–Պարոն Զաքարյան, շատ է խոսվում մեր սպորտի հոգեբանական՝ կոլեկտիվիզմի պրոբլեմի մասին: Հաճախ ուղղակի ասվում է, որ Հայաստանում թիմային մարզաձեւերի արդյունավետ զարգացումն անհնար է:

–Այն, որ թիմային մարզաձեւերի պրոբլեմ մենք ունենք, փաստ է: Դա բացատրվում է ինչպես օբյեկտիվ՝ շատ ավելի մեծ գումարներ են պետք, այնպես էլ՝ սուբյեկտիվ պատճառներով, այսինքն հոգեբանական գործոնով, մարդու ֆակտորով: Առանց մեր համակարգում կարգ ու կանոն հաստատելու, առողջ հիմք դնելու, համապատասխան ուշադրություն դարձնելու մեր մասնագետներին եւ մարզիկներին, հազար ու մի պրոբլեմի կհանդիպենք: Հենց այս առումով պետությունը փորձում է շտկել իրավիճակը սպորտում, եւ որոշ արդյունքներ արդեն կան կամ շուտով կլինեն:

Ես հավատում եմ, որ մարզական համակարգի բոլոր մարդիկ ամեն ինչ կանեն, որ ապահովեն մեր սպորտի հաջողությունը, որը բացառիկ դեր ունի մեր ազգի, մեր պետության կյանքում:

–Ձեր վերջին մամուլի ասուլիսում Դուք կարեւորեցիք նաեւ մարզական մամուլի դերը:

–Ես մարզական մամուլը դիտում եմ որպես մեր մարզական կյանքի կարեւորագույն գործոն, որը շատ բանով պետք է նպաստի սպորտի զարգացմանը: Մեր նախարարությունը կարեւոր է համարում լրագրողների շատ ավելի ակտիվ մասնակցությունը մարզական կյանքին: Իմ կարծիքով, նրանք պետք է նաեւ հնարավորություն ունենան մեր հավաքականների հետ մեկնել արտասահման՝ կարեւոր մարզական իրադարձությունները լուսաբանելու համար:

–Չնայած բոլոր պրոբլեմներին, սպորտը շարունակում է մնալ մեր կյանքի ամենադինամիկ ոլորտներից մեկը: Հաճախակի անհրաժեշտություն է առաջանում ոչ միայն սովորական ինֆորմացիա ստանալ, այլեւ հարցազրույցներ հրավիրել սպորտի մեր պատասխանատուներին:

–Ես միշտ պատրաստ եմ համագործակցության, շատ լավ հասկանալով մամուլի դերը: Մամուլի ասուլիսները, հարցազրույցները, ուղղակի զրույցները եւ հանդիպումները լրագրողների հետ իմ աշխատանքի կարեւոր մասն են կազմում: Լրագրողները շատ բանով են նպաստում եւ ավելի շատ կարող են նպաստել մեր ընդհանուր գործին: Հավատանք եւ համագործակցենք:

Հարցազրույցը վարեց
ՇԱՎԵՆ ՎԱՐԴԱՆՅԱՆԸ

ՖՈՒՏԲՈԼ

ՈՒԵՖԱ-ի գավաթի 1/16 եզրափակիչի պատասխան խաղերը

UEFA CUP

Անցկացվեցին ՈՒԵՖԱ-ի գավաթի 1/16 եզրափակիչի պատասխան հանդիպումները:

Կրկին ամենագոլառատը ՊԱՕԿ-ի եւ «Աստեսիկոյի» խաղն էր: Ու եթե երկու շաբաթ առաջ Մադրիդում 7 գոլ գրանցվեց, այս անգամ Սալոնիկում թիմերը 4-ական անգամ գրավեցին միմյանց դարպասը:

Մեծ հետաքրքրությամբ էր սպասվում «Լիոն»-«Ինտեր» խաղը: Բանն այն է, որ Միլանում կայացած առաջին հանդիպման ժամանակ իտալական սուպերակումբը անսպասելիորեն պարտություն էր կրել ֆրանսիական համեստ թիմից: Այս անգամ ամեն ինչ ընկավ իր տեղը. «Ինտերը» մրցակցի դաշտում վստահ հաղթանակ տարավ ու կշարունակի պայքարը:

Շատ հետաքրքիր անցավ նաեւ «Բասիա»-«Այաքս» հանդիպումը: Արդեն առաջին խաղակեսում ֆրանսիացիները 2-0 հաշվով առջեւում էին, եւ այդ հաշիվը նրանց ձեռնտու էր: Սակայն հետագայում ռումին ֆուտբոլիստները կարողացան փոխել խաղի ընթացքը, եւ շնորհիվ մրցակցի դաշտում ավելի շատ խփած գոլերի, 1/4 եզրափակիչ դուրս եկավ «Այաքսը»:

Առաջին խաղում երկու գնդակի առավելությամբ մրցակցին հաղթած Մոսկվայի սպարտակցիները լավատեսությամբ էին սպասում պատասխան հանդիպմանը: Եվ այստեղ եւս մոսկվացիները պարտության մատնեցին Վալյադոլիդ քաղաքի համանուն թիմին՝ 2-1: Հանդիպման հերոսը դարձավ մոսկվացի Ալեքսանդր Շիրկոն, որը խփեց երկու գոլը (34-րդ եւ 90-րդ րոպեներին):

Ինչպես եւ սպասվում էր, Ռուսաստանի երկրորդ թիմը՝ «Ռոստորը», Վոլգոգրադում ոչ-ոքի խաղալով «Լացիոյի» հետ, Հռոմում չկարողացավ խուսափել պարտությունից:

Պորտուգալական «Բրագայից» երկրորդ պարտությունը կրեց Թբիլիսիի «Դինամոն», այս անգամ արդեն՝ իր դաշտում:

«Անդերլեխթ» (Բելգիա)-«Շալկե-04» (Գերմանիա) եւ «Բոխում» (Գերմանիա)-«Բրյուգգե» (Բելգիա) հանդիպումներն ավարտվեցին երեկ ուշ երեկոյան:

Վալյադոլիդ (Իսպանիա)-**Սպարտակ (Ռուսաստան)** 1-2 (0-2)
Լացիո (Իտալիա)-Ռոստոր (Ռուսաստան) 3-0 (0-0)
Դինամո (Վրաստան)-**Բրագա (Պորտուգալիա)** 0-1 (0-4)
Ուդինեզե (Իտալիա)-**Այաքս (Հոլանդիա)** 2-1 (0-1)
Լիոն (Ֆրանսիա)-**Ինտեր (Իտալիա)** 1-3 (2-1)
ՕՖԻ (Հունաստան)-**Օսեր (Ֆրանսիա)** 3-2 (1-3)
ՊԱՕԿ (Հունաստան)-**Աստեսիկո (Իսպանիա)** 4-4 (2-5)
Աստոն Վիլլա (Անգլիա)-Աստեսիկ (Իսպանիա) 2-1 (0-0)
Լիվերպուլ (Անգլիա)-**Ստրասբուրգ (Ֆրանսիա)** 2-0 (0-3)
Բասիա (Ֆրանսիա)-**Այաքս (Ռումինիա)** 3-2 (0-1)
Կառլսրուե (Գերմանիա)-Մեց (Ֆրանսիա) 1-1 (2-0)
Մյունխեն 1860 (Գերմանիա)-**Ռապիդ (Ավստրիա)** 2-1 (0-3)
Տվենտե (Հոլանդիա)-Օրխուս (Դանիա) 0-0 (1-1)

Սուգ գույնով առանձնացված են 1/4 եզրափակիչ դուրս եկած թիմերը: Փակագծում տրված են առաջին խաղերի արդյունքները:

ՌՈՅԵՏԵՐ-ԱՐՄԵՆՊՐԵՍ

Այսպիսի լարված պահեր հաճախ եղան ՕՖԻ-«Օսեր» հանդիպման ժամանակ: Ձախից՝ Ֆրանսիացի Ժան Լաբոն, հույն Յանիս Անաստասիուն եւ Պետրոս Մարինակիսը

Ռոման Բերեզովսկին կարողանա դաշտանել Ֆուտբոլի Հայաստանի ազգային հավաքականի դարդարանքը

ԵՐԵՎԱՆ, 5 ՆՈՅԵՄԲԵՐ, ԱՐՄԵՆՊՐԵՍ: Հայաստանի ֆուտբոլի ֆեդերացիայի գլխավոր քարտուղար Պավել Խաչատրյանը, Արմենպրեսի թղթակցի խնդրանքով մեկնաբանելով դարպասապահ Ռոման Բերեզովսկու շուրջ մոսկովյան մարզական մամուլի որոշ հրապարակումներ, ասաց, որ Ռ. Բերեզովսկին շարունակելու է հանդես գալ Հայաստանի հավաքականի կազմում:

Պ. Խաչատրյանն ասաց նաեւ, որ ինքը՝ Ռոմանը, շատ լավ է գիտակցում, որ հայկական ֆուտբոլը իր համար ճանապարհ բացեց դեպի միջազգային ֆուտբոլ եւ «աստղ» դարձրեց, եւ նա երբեք այլ հավաքականում հանդես գալու ցանկություն չի հայտնել: Հակառակը, Բերեզովսկին մեր թիմի առաջատարներից մեկն է եւ մեծ հեղինակություն է վայելում:

Իսկ ինչ վերաբերում է այս կամ այն ակումբի կազմում նրա հանդես գալուն, արդա դա Բերեզովկու անձնական գործն է, եւ ՀՀ ֆուտբոլի ֆեդերացիան նրա վերաբերյալ տարբեր առաջարկներ ստանալով, տեղեկացնում էր Բերեզովսկուն դրանց մասին, որպեսզի ֆուտբոլիստն ինքը որոշի, թե որ երկրի որ ակումբի կազմում ելույթ ունենա:

ՆԱՐԴԻ

Է. Սահակյանը՝ Վանաձորի գավաթակիր

Վանաձորի վետերանների ակումբում անցկացվեց նարդու «բակգամոն» («կարճ») խաղաձեւի քաղաքի գավաթի անդրանիկ խաղարկությունը: Եռօրյա պայքարին մասնակցեցին 24 նարդիստներ: Եզրափակիչում հանդիպեցին էդիկ Սահակյանը եւ Վարուժան Դերձյանը: Գավաթը նվաճեց աշխատանքի վետերան Սահակյանը, որը 15-12 հաշվով պարտության մատնեց քաղաքի փոխքաղաքապետ Դերձյանին:

ՏԻԳՐԱՆ ՍԱՐԳՍՅԱՆ
Լոռու մարզի նարդի ֆեդերացիայի նախագահ

ԱԶԳ

օրվա հետքով

ՀԱՄԱՌՈՏ

Իրանը կավելացնի գազի մատակարարումը Հայաստանին

ԹԵՀՐԱՆ, 5 ՆՈՅԵՄԲԵՐ, ՆՈՅՅԱՆ ՏԱՊԱՆ: Հայաստանը շահագրգռված է իրանյան գազի գնմամբ, տեղեկացնում է IRNA գործակալությունը: Ըստ այդ հաղորդման, Իրանում այցելությամբ գտնվող Հայաստանի փոխարտգործնախարար Մերգեյ Մանասարյանը հայտնել է Իրանից բնական գազ գնելու Հայաստանի ցանկության մասին: Մանասարյանը այդ մասին խոսել է Իրանի նավթի նախարար Բիջան Նամդար Զանգանեհի հետ հանդիպման ժամանակ: Իր հերթին «Ռոյթեր» գործակալությունը նշում է, որ Իրանն արդեն իսկ Հայաստանին բնական գազ է մատակարարում Վրաստանի տարածով անցնող գազամուղով, ինչպես նաեւ էլեկտրականություն՝ նվազեցնելով Հայաստանի կախվածությունը ատոմակայանից: Նույն աղբյուրի համաձայն, 2000 թ.-ից Իրանը Հայաստանին օրական 28 մլն խորանարդ մետր գազ կառաքի:

Թուրքերը Յուրի Ռոստին մեղադրում են լրտեսության մեջ

ԹԲԻԼԻՍԻ, 5 ՆՈՅԵՄԲԵՐ, ՆՈՅՅԱՆ ՏԱՊԱՆ: Ռուս անվանի ֆոտոլրագրող Յուրի Ռոստին թուրքական իշխանությունները մեղադրում են հօգուտ Ռուսաստանի լրտեսության մեջ: Ինչպես հաղորդում է «Կավկազպրես» գործակալությունը, Յու. Ռոստը վրացի կինովավերագրողների հետ գտնվել է Թուրքիայում եւ մասնակցել վրացական մշակույթի հուշարձանների մասին վավերագրական ֆիլմի նկարահանումներին: Սակայն թուրքական իշխանությունները այն պատրվակով, թե Յուրի Ռոստը հուշարձանների հետ մեկտեղ նկարահանել է ամերիկյան ռազմական բազաներ ու թուրքական ռազմական օբյեկտներ, վտարել են կինեմատոգրաֆիստների խմբին երկրից, նախապես նրանցից խլելով նկարահանված նյութի մի մասը:

Գորբաչովը Բեռնի հիվանդանոցում

ԺՆԵՎ, 5 ՆՈՅԵՄԲԵՐ, ԱՐՄԵՆՊՐԵՍ: Խորհրդային Միության նախկին նախագահ Միխայիլ Գորբաչովը ներկայումս գտնվում է Շվեյցարիայի մայրաքաղաքի խոշորագույն բուժարաններից մեկում «Ինսեսպիտալում»: Շվեյցարիայի ռադիոն, հաղորդելով այդ մասին, ոչինչ չի հայտնել Բեռնի բուժարանում նրան պառկեցնելու պատճառների մասին: Ինչպես հաղորդել է ԻՏԱՌ-ՏԱՍՍ-ը, Միխայիլ Գորբաչովը հիվանդանոցում է գտնվելու առնվազն մինչեւ հինգշաբթի՝ առողջական վիճակի մանրակրկիտ բուժզննման համար:

ՔԱՂԱՎԻԱՅԻԱ

Կոստրագրվի հայ-թուրքական արձանագրություն Գյումրի-Կարս օդային մայրուղու վերաբերյալ

ԵՐԵՎԱՆ, 5 ՆՈՅԵՄԲԵՐ, ՆՈՅՅԱՆ ՏԱՊԱՆ: Նոյեմբերի 11-ին Հայաստան կժամանեն Թուրքիայի քաղաքացիական ավիացիայի ներկայացուցիչները, որոնք ՀՀ քաղավիացիայի վարչության հետ կստորագրեն արձանագրություն՝ Գյումրի-Կարս օդային մայրուղու բացման վերաբերյալ: Այդ մայրուղու ներդրմամբ եւս մեկով կավելանա Հայաստանի տարածով անցնող միջազգային օդային մայրուղիների թիվը:

Ինչպես արդեն տեղեկացվել է, այս տարեսկզբին Հայաստանում տեղի ունեցավ քաղաքացիական ավիացիայի հարցերով Անդրկովկասի, Թուրքիայի ու Իրանի ներկայացուցիչների խորհրդակցությունը, որտեղ քննարկվեց տարածաշրջանում միջազգային տարանցիկ օդային նոր ուղիների ներդրման խնդիրը: Այդ օդուղիները անցնելու են Եվրոպա-Թուրքիա-Հայաստան-Ադրբեջան-Միջին Ասիա եւ Եվրոպա-Վրաստան-Հայաստան-Իրան առանցքներով եւ դառնալու են Եվրոպան արեւելյան երկրների հետ կապող օդային ամենակարճ ուղիները:

Ինչպես հայտնեց ՀՀ քաղավիացիայի օդային սպասարկումների բաժնի պետ Էդվարդ Փիլոսյանը, վերոհիշյալ մայրուղու շահագործմամբ, փաստորեն, ամբողջությամբ կգործի Եվրոպա-Թուրքիա-Հայաստան-Ադրբեջան-Միջին Ասիա առանցքը: Այս առանցքի մեջ մտնում է եւս մի, վաղուց գործող մայրուղի, որն անցնում է Երեւանի վրայով: Գյումրի-Կարս մայրուղու բացմամբ ուղիղ գծով նոր օդային ճանապարհ կբացվի Միջին Ասիայից դեպի Թուրքիա, այնուհետեւ՝ եվրոպական երկրներ: Այդ թռիչքները մինչեւ այժմ իրականացվում էին Վրաստանի տարածով՝ շրջանցելով Հայաստանը: Երկրորդ՝ Եվրոպա-Վրաստան-Հայաստան-Իրան առանցքով անցնող միջազգային մայրուղու վերաբերյալ դեռեւս կան չճշտված հարցեր Վրաստանի հետ:

Է. Փիլոսյանը տեղեկացրեց, որ թուրքական ավիացիայի ներկայացուցիչների հետ հանդիպմանը բանակցություններ կվարվեն նաեւ արեւմուտք-արեւելք գործող մայրուղու ուղեգծի փոփոխման վերաբերյալ: Հայկական կողմից առաջարկվում է մայրուղու ուղեգծի մի կեսը՝ Իգդիրը հանել, ինչը հնարավորություն կտա Ադրբեջանից եկող եւ Երեւանից Թուրքիա թռչող ինքնաթիռներին ուղիղ գծով թռչել դեպի երգրում եւ մոտ 50 կմ-ով կրճատել ճանապարհը:

Պատրիարք Բերեզովսկին հանդես է եկել Չուբայսին ուղղված մեղադրանքներով

ՈՌՈՅԵՐ-ԱՐՄԵՆՊՐԵՍ

ՍՈՍԿՎԱ, 5 ՆՈՅԵՄԲԵՐ, ԱՐՄԵՆՊՐԵՍ: ՈՂ Անվտանգության խորհրդի նախկին քարտուղար Բորիս Բերեզովսկին, որը պատրոնից հեռացվել էր երկու առաջին փոխվարչապետների նախաձեռնությամբ, Անատոլի Չուբայսին մեղադրել է երեսպաշտության եւ առեւտրային Օնեքսիմբանկի շահերի լոբբիականացման մեջ:

Չուբայսի «խոսքերը տարբերվում են գործերից», հատկապես աճուրդներում խաղի հավասար եւ ազնիվ կանոնների առումով, «էխո Մոսկվի» ռադիոկայանի ուղիղ եթերով հայտարարել է Բերեզովսկին:

ԻՏԱՌ-ՏԱՍՍ-ի հաղորդման համաձայն, Չուբայսի հետ կոնֆլիկտի գլխավոր պատճառն այն է, որ, ինչպես արտահայտվել է Բերեզովսկին, «իր մտածելակերպով, գործելակերպով Անատոլի Չուբայսը բոլշեւիկ է, քանի որ գտնում է, թե ցանկացած միջոց արդարացնում է նպատակին հասնելը: Նա ջանում է բոլորին պարտադրել իր տեսակետը», ընդգծել է Բերեզովսկին:

Ադրբեջանը դարձյալ խեղաթյուրում է պատմությունը եւ փաստերը

ԵՐԵՎԱՆ, 5 ՆՈՅԵՄԲԵՐ, ԱՐՄԵՆՊՐԵՍ: ՇԱՐԳ գործակալության հաղորդագրության համաձայն, Ադրբեջանի գիտությունների ակադեմիայի աշխարհագրության ինստիտուտը 50 էջանոց մի բառարան է պատրաստել տպագրության՝ Հայաստանի ադրբեջանական աշխարհագրական անունների բացատրությամբ: Բառարանը հեղինակել են ակադեմիկոս Բուդաղ Բուդաղովը եւ պատմական գիտությունների դոկտոր Գեյսատին Գեյբուլաեւը: Նույն աղբյուրի համաձայն, մինչեւ 1828 թվականը Հայաստանը կոչվում էր Երեւանի խանություն եւ կազմում էր Ադրբեջանի մի մասը: Այդ ժամանակ Երեւանի խանության տարածքում ապրող բնակչության մեծամասնությունը ադրբեջանցիներ էին եւ, բնականաբար, լեռները, գետերը, գյուղերը, բնակավայրերն ու քաղաքները կրում էին թուրքական անուններ: Ընդհանուր թվով այս բառարանում զետեղված են 3000 նման տեղանուններ:

Այս հաղորդագրությունը ադրբեջանական հայտնի քաղաքականության հերթական մանեւրներից է, ինչը նպատակ ունի մեկ անգամ եւս խեղաթյուրել պատմությունն ու իրական փաստերը: Ակնհայտ է, որ ադրբեջանական քարոզչությունը հակված է նման բանսարկություններ, եւ այս պարագայում արժե՞ լուրջ ընդունել դրանից դուրս պատմությունը չտեսնող Ադրբեջանի գիտությունների ակադեմիայի հեղինակած աշխատանքը:

Նոյեմբերի 8-ից Ղազախստանի մայրաքաղաքը կլինի Ակմոլան

ԱԼՄԱ ԱԹԱ, 5 ՆՈՅԵՄԲԵՐ, ԱՐՄԵՆՊՐԵՍ: Ղազախստանի նախագահն անսպասելիորեն վերանայել է հանրապետության մայրաքաղաքը հարավային Ալմա Աթայից հյուսիսային Ակմոլա քաղաք տեղափոխելու ծրագիրը: Հանդիսավոր արարողությունը կկայանա ոչ թե դեկտեմբերի 10-ին, ինչպես նա վաղօրոք պատշաճաբար հայտարարել էր, այլ նոյեմբերի 8-ին: Ալմա Աթայից նախարարությունների եւ գերատեսչությունների աշխատակիցների մեկնումն արդեն սկսվել է: Նոյեմբերի 7-ին երկրի հյուսիս կուղեւորվի հատուկ գնացքը՝ նախագահի եւ կառավարության աշխատակազմի 300 աշխատողներով: Իսկ հաջորդ օրը կկայանա Ղազախստանի պետական խորհրդանշանների՝ դրոշի եւ նախագահական դրոշակի նոր մշտական վայր փոխադրելու հանդիսավոր արարողությունը:

Հայաստանի Բաց հասարակության ինստիտուտի օժանդակության հիմնադրամի
Արեւելք-արեւելք ծրագիրը
հայտարարում է մրցույթ

մասնակցելու **«Ժողովրդավարական հասարակություն կերտելիս. արժեքներ եւ իրավունքներ: Քաղաքացիական հասարակությունը, որպես վկայություն ազատության մասին»** թեմայով սեմինարի, որը կկայանա նոյեմբերի 20-23-ին, Լվովում, Ուկրաինա:

Այս կլոր սեղանը նախատեսված է ուսանողների, դասախոսների եւ քաղաքագիտական ուսումնասիրություններով զբաղվող մասնագետների համար: Նախագծի նպատակն է փոխանակել գաղափարներ այնպիսի հասարակության մասին, որը հարգում է մարդկանց արժանապատվությունը, մարդկային արժեքները, ճանաչում է անհատների եւ կոլեկտիվի իրավունքները, նրանց իրավունքներն անցումային շրջանում եւ անհատականության կազմավորումն ավանդական ավտորիտար ռեժիմի փլուզումից հետո:

Դիմումներն ընդունվում են մինչեւ նոյեմբերի 15-ը 1997 թ.:
Անհրաժեշտ է ներկայացնել.

- ինքնակենսագրություն
- երաշխավորագիր
- հիմնավորում, թե նշված միջոցառումը որքանով կնպաստի մասնակցի հետագա գործունեությանը:

Ավելի մանրամասն տեղեկությունների համար դիմել Հասմիկ Բեգլարյանին, Բաց հասարակության ինստիտուտի օժանդակության հիմնադրամ-Հայաստան, հետեւյալ հասցեով՝

Այգեձորի 53բ
Հեռ. 272119, 271713

Հայաստանի Բաց հասարակության ինստիտուտի օժանդակության հիմնադրամի
Արեւելք-արեւելք ծրագիրը
հայտարարում է մրցույթ

մասնակցելու **«Հարավարեւելյան Եվրոպայի տարածաշրջանային ինտեգրացիայից մինչեւ Եվրոպայի ինտեգրացիա»** թեմայով սեմինարի, որը տեղի կունենա դեկտեմբերի 10-13-ին, Քիշինեւում, Մոլդովա:

Սեմինարը նախատեսված է քաղաքական ստրատեգիաների եւ կայունության հարցերով զբաղվող փորձագետների, հասարակական կազմակերպությունների, սոցիոլոգների, անկախ լրատվության աշխատակիցների համար: Դրա նպատակն է քննարկել ինտեգրացիան Եվրոպայում՝ անվտանգության, տնտեսական եւ մշակութային համագործակցության տեսանկյուններից: Այն նախատեսում է մշակել ավելի համակարգված համագործակցություն Հարավարեւելյան Եվրոպայի երկրների համար:

Դիմումներն ընդունվում են մինչեւ 1997 թ. դեկտեմբերի 1-ը 1997 թ.:
Անհրաժեշտ է ներկայացնել.

- ինքնակենսագրություն
- երաշխավորագիր
- հիմնավորում, թե նշված միջոցառումը որքանով կնպաստի մասնակցի հետագա գործունեությանը:

Ավելի մանրամասն տեղեկությունների համար դիմել Հասմիկ Բեգլարյանին, Բաց հասարակության ինստիտուտի օժանդակության հիմնադրամ-Հայաստան, հետեւյալ հասցեով՝

Այգեձորի 53բ
Հեռ. 272119, 271713

ՎԱՃԱՌՎՈՒՄ է
4 սենյականոց բնակարան 115/70 քմ, Չարենցի 52, 3 հարկանի քարե շենքի 2-րդ հարկում:
Հեռ.՝ 55-66-56

ՎԱՃԱՌՎՈՒՄ է
4 սենյականոց բնակարան *(Դավիթաշեն, II թաղամաս, 3-րդ շենք, բն. 4):*
Զանգահարել 72-89-83

Հայաստանի Հանրապետությունում Լիբանանի դեսպանատունը պատիվ ունի հայտնելու Հայաստանի ժողովրդին եւ Լիբանանի համայնքին, որ դեսպանատան հյուպատոսական բաժինը վերսկսել է իր աշխատանքը դեսպանատան նոր գրասենյակում՝ Վարդանանց 7 հասցեով: Ընդունելությունը երկուշաբթի օրվանից մինչեւ ուրբաթ օրը ներառյալ, ժամը 9.30-12.30-ը:

Գրասենյակի հեռախոսահամարներն են՝ 52-65-40, 56-14-96, 58-98-74
AT&T եւ Fax: 151 128
Կառավարական՝ 69-04
E-mail:
libarm @ arminco.com

Օգտվելով առիթից Լիբանանի դեսպանատունը հիշեցնում է Հայաստանում Լիբանանի համայնքին, որ դեսպանատանը գործում է հասցեների գրանցման ծառայություն:

ՎԱՃԱՌՎՈՒՄ է
սեփական երկհարկանի շենքի 2-րդ հարկը՝ բաղկացած երեք սենյակից: Երկու կողմից սեփական հողատարածք՝ 300 քառ մետր ընդհանուր մակերեսով: Երկու ավտոնավակ, մուտքը առանձին: Հասցեն՝ Զրաբաս 68 (ԳԱ հետեւի մասում):
Հեռախոս 52-54-39:

ՎԱՃԱՌՎՈՒՄ է
առանձնատուն, 80 քառ. մ նկուղ-ավտոնավակով եւ երկու բնակելի հարկով (առանց ներքին հարդարանքի), «Զվարթնոց» կինոթատրոնի մոտակայքում (Մոնումենտ): Կա նաեւ մրգատու ծառերով փոքրիկ այգի:
Զանգահարել՝ 27 22 57 ժամը՝ 10-16, 58 33 26 ժամը՝ 18-23

«ՍՓՅՈՒՌ» ՏԵՂԵԿԱՏՈՒ - ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՉԵՌՆԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ
հեռախոսով (589167, 581351) - պարբերաբար հրատարակվող տեղեկագրքերով - մագնիսական սկավառակներով - INTERNET ցանցով (http://www.arminco.com/spyur):

«Տիգրան Մեծ» հրատարակչության տպարան, Երեւան-23, Արտակունեաց 2 Գրանցման թիւ 65. Դասիչ 69149. Պատուէր 699 Տպաքանակը՝ 3000 Ստորագրված է տպագրության՝ 5. 11. 1997 Գինը՝ 100 դրամ